



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

636

Զ-32

Ա. Զ Ա Կ Ա Ր Ե Ա Ն

# ԱՆԱՄՆԱՊԱՅՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԿԱԹՆԱՏՎՏԵՍՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐ ԵՒ ՊԻՐԻՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

(Արտասպուած «ՄՈՒՐՃ» ամսագրից),

ՀԵՂ

Գրաց Հրատ. Ընկերութեան թիվ 11  
1902 Տիպոգրաֆія Грузинск. Изд. Т—ва.

06 FEB 2009

656  
APR 2009

24 SEP 2010

5-32

Ա. ԶԱԿԱՐԵԱՆ

630  
34-ԶԱ

9/

# ԱՆԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

## ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

### ՄԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

(Արտասպուած «ՄՈՒՐՃ» ամսագրից):



ԹԻՖԼԻՍ

Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան || Типографія Грузинск. Изд. Т—ва.

1902

1000 932 A2

ՀՅԱԼԻԱՅՑ 0


## ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԺՈՒՅՈՒՆԱՅԻՆ

13

## ԱՐԴԻՇԱԿԱՑՄԱՆ ՏԵՂՄԱՆ

## ԱՐԴԻՇԱԿԱՑՄԱՆ ՏԵՂՄԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 5 февраля 1902 года.

1003  
10637

~~ԱՐԴԻՇԱԿԱՑՄԱՆ ՏԵՂՄԱՆ~~

41. Ա

Կովկասի աշխարհագրական դիրքը.—Հողի բաժանումները կովկասի զանազան շրջաններում.—Անառանների քանակութիւնը և նրանց տեսակները.—Համեմատութիւն Խուսաստանի և Եւրոպակի հետ.—Նկատուած տարբերութիւնների պատճառները.—Ի՞նչ փոփոխութիւններ է կրում անառապահութիւնը ժամանակի ընթացքում:

I

Ինչպէս և բոլոր լեռնային երկիրներում, անամնապահութիւնը կովկասում է բաւականին մեծ դեր: Դրա ամենամեծ պատճառը երկրի մակերեսոյթը և դիրքն է: Պ. Ստատկովսկու \* հաշուով Սնդրկովկասի հինգ նահանգների ամբողջ մակերեսոյթի 152<sup>2</sup> հազ. քառ. վերստից, զանազան բարձրութիւն (հաշուած ծովի մակերեսոյթից) ունեն.

Մինչև	1,000"	Գուտ ունի	444 ք.	Վ.	Կամ	29%
» 1—	2,000"	»	217	»	»	142
» 2—	4,000"	»	299	»	»	150
» 4—	6,000"	»	309	»	»	202
» 6—	8,000"	»	236	»	»	154
» 8—10,	10,000"	»	68	»	»	44
» 10—12,	12,000"	»	18	»	»	11
» 11—12,	12,000"	»	03	»	»	02

6,000"—7,009"-ից վերև այնքան ցուրտ է, որ չի կարող բուսներ ոչ մի հացահատիկ: Այդ պատճառով կովկասի մօտ 150/0-ը ծառայել է անցեալում, ծառայում է ներկայումս և ապագայում էլ ծառայելու է իրբե ամառուայ արօտ և արի, «ետի» անուան տակ: Կովկասեան ցուցահանդէսում ի ցոյց զրուած քարտէզում

\*) Խեքտիա Կավկ. Օ�. Ս. Խօ. 1884 թ. № 4.

միթրայն պետական ամառուայ արօտների տարածութիւնը նշանակուած է հաւասար 2,876,000 դեսետինի:

Բացի այդ, միայն արօտի համար կարող են ծառայել և այն ընդարձակ անապատները (Մուղանի, Ղարաբաղի, Շիրաքի, Սարգարաբաղի և այլն), որոնք թէե գտնուում են տաք զօտիի մէջ (0—2000" ծովի մակերեսոյթից բարձր), բայց չն կարող մշակուել, որովհետեւ անձրեների պակասութեան պատճառով առանց արհեստական ոռոգման այդտեղ ոչինչ չի բունուած: «Ոչինչ» ասելով, ես ուզում եմ շեշտել մշակուող բոյսերի վրայ և ոչ խոտի ու միքանի տեսակ վշշերի ու թփերի, որոնք կանաչում են այդտեղ գարնանն ու աշնանը և միջոց տալիս թափառականներին արածացնել իրանց հօտերը նոյն իսկ ձմեռուայ ամիսներին: Այդ տեսակ «ձմերանոցների» (կիշլակների) տարածութիւնը ոչ պակաս է քան 2 միլիոն դես., որովհետեւ միայն պետութեան ձմեռուայ արօտները բոնում են 1,708,600 դես.:

Նոյն իսկ երեանի նահանգուած, որ ամենախիտ բնակուածն է կովկասում, «գաշտերի» տարածութիւնը համար է 300,000 դես., կամ նահանգի ամբողջ տարածութեան  $115^0/0$ -ի<sup>\*</sup>: Ժամանակին ձմերանոցները կը ջրուեն, կը դասնան մեր երկրի ամենաճարուատ անկիւնները, միջոց տալով բնակութիւն, հաստատել  $1^{1/2}$ —2 միլիոն ընտանիքների: Դա նախատեսնուած է դեռ 40 տարի մեղանից առաջ, երբ անգլիացի Բէլլի և Գարին ժենենքները կազմեցին իրանց յայտնի ծրագիրները կովկասի ոռոգման մասին... Բայց... սա դեռ ծրագիր է, ուշ իրագործուելի ծրագիր և մեր տաք անապատները գեռ երկար ժամանակ ամառը կը ծառայեն օձերին, իսկ ձմեռը իրքեւ արօտատեղեր:

Եթէ «սարերի» ու «գաշտերի» վրայ աւելացնենք և լեռների լանջերի ու փեշերի այն մասերը, որոնք չնորհիւ զառիվայրի մեծ աստիճանի չեն կարող մշակուել, այլ մնալու են ընդ միշտ ծածկուած խոտով կամ թփերով, մենք կը ստանանք մօտաւոր գաղափար այն ահագին տարածութեան մասին, որ յատկացուած է կովկասում միթրայն անասնապահութեան համար:

Բայց չը որ անասունների կեր են կազմում և վարելահողերի վրայ բուսնող արտերի գարմանը, այգիներում քաղուող խոտը և անտառների թալաներն ու ծառերի շուտաքի տակ դալարող ցողունները:

<sup>\*</sup>) Даниловичъ, Районъ Тифл-Карсской ж. д., Тифлисъ, 1897 г.

Հողաչափութեան հնթարկուած հողերի հաշուին նայելով, ինչպէս և ի նկատի առնելով պ. էմերովի՝ ցուցահանդէսին հանդէս բերած քարտէզները Դաղստանի մասին, կովկասի այլ և այլ նահանգներում զանազան կարգի հողերը կազմուած են ընդհանուր տարածութեան հետեւալ մասը ( $0^0/0$ -ի վերածած):

Խանդ-	Ալիք-	Խոտ-	Արարա-	Անպէտք.	Ընդա-
ներ	բանջար.	լանդ.	հարք.	մաշո.	մենը.
Թիֆլիսի	08	200	81	280	390
Քութայիսի	19	182	26	55	657
Երևանի	07	290	23	598	23
Դաղստանի	03	80	93	334	55
				435	100

Ինչ վերաբերում է Անդրկովկասի հողերի կարգերին ընդհանրապէս, դրա մասին գաղափար կարելի է կազմել պետական պակասի ժողոված ցուցակից, որ կազմուած էր նոր մտցրած հողահարկի համար:

Այդ ցուցակին նայած, ամբողջ Անդրկովկասի 22682 միլ. դես. հողեց պիտանի է համարուած միայն  $15516$  միլ. դ. կամ երկրի մակերեսոյթի  $675^0/0$ -ը: Մնացած  $1/3$  մասը բանուած է ժայռերով, ջրերով, աւազներով, ճանապարհներով, չնասեղերով և այլ գիւղատնախութեան համար անպէտք հողերով: Պիտանի տարածութիւնից (155 միլ. դ.) զանազան կարգի հողերը բանուած են.

I կարգի (այգի, բուսան)	148	հ. դ.	$10^0/0$ -ը.
II » (վարելու, խոտհարք)	4,1875	»	27 »
III » (արօտ և անտառ)	11,281	»	72 »

Եթէ վերջի կարգի հողերից բաժանենք անտառները (4,801 հ. դ. տարածութեամբ), կարող ենք հաշուել որ մաքուր արօտները բանուած են  $6,480$  հ. դ. կամ պիտանի հողի  $41^0/0$  իսկ անտառները »  $4,801$  » » » »  $31$  »

Համեմատած երկրի ամբողջ տարածութեան հետ (227 միլ. դ.): Ազգիները, բանջարանոցները կը

բնեն . . .	148	հ. դ. կամ երկրի	$065^0/0$
Վարելահող, խոտհարքները	4,1875	»	1850 »
Արօտ և մացաները	7,4800	»	3300 »
Անտառները	4,801	»	2120 »
Անպէտք տարածութ.	6,066	»	2670 »

Ինչքան խոտ է ստացուած այս տարածութիւնից և ինչքան «ապրանք» կարելի է մնուցանել ուրեմն կովկասում՝ բաւական դժուար է ծառուել որոշել:

Չոր կլիմայ ունեցող երեանի արօտները, մանաւանդ ձմեռանոցների, աւելի ազքատ են խոտով, քան աւելի բարեխան կլիմայ ունեցող թիֆլիսի սահանգի արօտները, թէե միևնույն

ժամանակ Երևանի նահանգում ցանուող եօնջան տալիս է 300—400 պուդ զեսետինից, իսկ թիֆլիսի արօտների բնական խոտանարքերը միմիայն 100—150 պուդ:

Միւս կողմից Դաղստանի լեռների վրայ բուժող «ալպիան», «ոչխարի» խոտը աւելի աղնիւ, աւելի մնջարար է, քան խոռոշաւ Քութայիսի նահանգի ճոտու ջրալի (թէ և ըստ արտաքինին փարթամ) բուսականութիւնը:

Ի նկատի ունենալով, որ Թիֆլիսի նահանգում խոտանարքներից ու այգիներից միջին թւով ստացւում է 100-ական պուդ խոտ, արտերից 80-ական պ. յարդ, արօտներից 40 պ. խոտ, իսկ անտառներից 10-ական պ., 1900 թուին<sup>\*)</sup> ես հաշուած էի որ ամբողջ նահանգում միջին թւով կենդանիների պաշար է ստացւում ձմեռուայ 71<sub>9</sub> միլ. պ., ամառուայ 74<sub>3</sub> միլ. պ., իսկ ընդամենը 146<sub>2</sub> միլ. պ., որ նահանգի ամբողջ տարածութեան հետ համեմատած տալիս է 37<sub>5</sub> պ. միջակ զեսետինից: Երևանեան նահանգի<sup>\*\*)</sup> ձմեռուայ պաշարը հաշուած էր 42<sub>4</sub> միլ. պ., ամառուանը 59<sub>3</sub> միլ. պ., ընդամենը 101<sub>7</sub> միլ., որ նահանգի տարածութեան վրայ տալիս է 45<sub>2</sub> պուդ զեսետինից: Քանի որ զիտնական Վոլֆի հաշուով կենդանիների ապրելու համար ամեն մի հազար ֆունտին (25 պուդ) օրական տրում է 20—26 ֆ. խոտ և քանի որ Կովկասի մեծատաւարը իր փոքրութեամբ (10—15 պուդ) իսկապէս բաւականանում է 15 ֆունտով, տարեկան ծախսը միջակ մեծատաւարի վրայ հաշուելու է մօտ 56 պ. ձմեռուայ 5 ամիսների համար և մօտ 79 պ. ամառուայ 7 ամիսների համար, ընդամենը 135 պուդ, որ ներկայ պայմաններում պահանջում է իր համար միջին թուով 3 զեսետին հող:

Այս թուերի համեմատ կարելի էր հաշուել, թէ Երևանեան նահանգի ամբողջ ապրանքների թիւը «մեծատաւարին» վերածած (2260; 3=753), նամանաւանդ որ այդ ձեռով ստացուած թուին (753 հազ.) շատ մօտ է նահանգի ամբողջ ապրանքի քանակութեանը (751<sub>8</sub> հազ.), եթէ զրան իրրե հիմքը ընդունել արքունական հողերի վրայ ապրող զիւղացոց անամսապահութիւնը, որ հաշուած էր 1884—85 թուերին: Բայց քանի որ այս հարցի վերաբերմամբ շատ մեծ գեր են խաղում տեղական պայմանները, քանի որ պաշտօնական (տանուտէրերի միջոցով ժողոված) թուերը շատ կասկածելի են, աւելի նպատակայարմար է երկրի անասունների քանակութիւնը որոշելիս, իբրև հիմք ընդունել

<sup>\*)</sup> Կավказъ въ сельско-хозяйственномъ отношении въ 1899 г.

<sup>\*\*) Ibid.</sup>

պետական հողերի վրայ ապրող գիւղացոց<sup>\*)</sup> ապրանքի չափը: Մասնաւանդ որ այդ կարգի գիւղացիք կազմում են երկրի ազգաբնակութեան ստուար մասը (572<sup>0</sup>/0): Ինչ վերաբերում է այդ կարգի գիւղացիների համեմատաբար աւելի հարուստ լինելուց առաջ եկած սխալին, դա գերակշռուած կարող ենք համարել այն հանգամանքով, որ մենք հաշուի չենք առնելու քաղաքացիների անասունները: Ի նկատի առնելով այդ հանգամանքը, ինչպէս և ընդունելով որ ժամանակի ընթացքում անասունների թիւը աւելացել է նոյն չափով, ինչ չափով աւելացել է ազգաբնակութիւնը, մենք կը ստանանք, որ Անդրկովկասի գիւղական ազգաբնակութիւնը (4822 հազար թուի համեմատ) ունի:

Խնչ տեսակ անասուն. 100 անձի վրայ. Ընդամենը.

Մեծատաւար (գոմէշ, կով, հորիթ, եղբ)	78	3,761	հազ.	
Մարդատաւար (ոչխար, այծ, գառը)	229	11,038	»	
Ձի, ջորի, աւանակ	.	13	627	»
Խոզ	.	8	386	»
Ուղտ	.	1	48	»
<hr/>	<hr/>	<hr/>	<hr/>	
Ընդամենը	329	15,860	»	

Արանք միջակ թուեր են ամբողջ երկրի համար ընդհանրապէս:

Ամեն մի նահանգի, գաւառի և մանաւանդ գիւղի անասունների քանակութեան և որակութեան մասին այս թուերը տալիս են շատ հարեանցի գաղափար: Այդ կողմից Կովկասի զանազան շրջաններ և նոյն իսկ գիւղեր տարբերում են միմեանցից շատ զգալի կերպով, նոյն չափով ինչ չափով, տարբեր են զանազան շրջանների բնական հասարակական և նոյն իսկ ազգագրական պայմանները:

Դրա մէջ համոզուելու համար բաւական է մի թեթև հայեցք ձգել, թէ ինչ տարբերութիւն են ներկայացնում անասնապահութեան վերաբերմամբ Կովկասի զանազան նահանգներն ու գաւառները: Այդ տարբերութիւնների նշանակութիւնը աւելի ես լուսաբանելու համար, ինձ օգտակած է թուում բերել այսեղ և այլ երկրներին վերաբերեալ համապատասխան տեղեկութիւններ ամեն մի 100 անձի վրայ հաշուելով.

<sup>\*)</sup> Թիֆլիսի, Քութայիսի, Քագուի, Գանձակի, և Երևանի նահանգների.

Երկիր, նահանգ	Հ գաւառ	Ազգայիններ	Մայուսացր.	Մայուսացր.	Հ գաւառ	Ազգայիններ	Հ գաւառ	Ազգայիններ
Անդրկովկաս 1)	.	255	78	229	13	8	1	329
Շիֆլիսի նահ.	.	232	103	365	16	23	—	507
Գութայիսի նահ.	.	357	40	12	5	29	—	86
Գանձակի 2)	.	229	76	151	11	7	—	245
Բագուկի	"	241	71	222	15	1	—	310
Երևանի նահ.	մշտակեաց ազգաբնակ.	443	78	177	9	04	2	265
Երևանի	թափառակ.		88	735	23	0	3	849
"	Ալեքսանդ. գ.	466	127	224	11	1	—	383
"	Նոր-Բագապ. գ.	23	81	226	9	01	—	316
Կարսի շրջան	.	189	114	186	14	0	0	314
Գաղոստանի շրջան	.	255	56	290	14	0	0	360
Եղանակ.	Խոսանաստան	233	34	70	22	14	0	142
Խոռո. Տարթիկեան նահ.	.	272	61	503	45	97	0	619
Սիրիրիալի Տօմսկի նահ.	.	26	78	98	77	0	0	253
Սիրիր. Խրիզների շրջ.	.	27	45	380	90	0	12	527
Քուրքեաստան և Անդրկ. Երկիր	.	27	33	255	25	0	20	333
Փորթուգալիա	.	508	16	99	7	25	—	147
Սպանիա	.	346	19	175	19	29	—	242
Յունաստան	.	336	19	284	16	12	—	331
Խումանիա	.	385	62	118	12	25	—	217
Ալյուրիա	.	449	61	257	10	106	—	434

<sup>1)</sup> Філіппісі, Феофаніїсі. Фаундасії, Фафопі і Урбакані, Наханғанбек-  
ірбін, ғұрархірбекшіл, төбекілістікінендер, ғерершілдік «Сводъ Матер. по  
изученію эконом. быта Госуд. Креянт Закавказья» ғареғі, қалыптастырылған  
«Наханғанбекірбін», әуаштодан шығын «Гравитария Академікіндері», пр. әуаштод  
ін «Наханғанғаскінендері» тәрілікінан қызығушашылар көзінде, пр.  
Урбакані, Урбакані, ғерершілдік «Производит. Силы Россіи» ғареғі.

Справник. Статистика"-*бг*. Альбомы Календарь—*бг*. "Русский Календарь"—*бг*.

<sup>2)</sup> Կոսկասի և Առասատանի ազգայինակութեան խոռոչինը (1897 թոփ ազգագրութեան հիման վրա) հաշուած է քառ. վերստի վրայ. Երբուայինն ու Ամերիկայինը—քառ. Քիւմետրի վրայ, որ վերստից քիչ պակաս է և վերցրած է «Otto Hübner-ի Geographische statistische tabellen» գրքից:

<sup>3)</sup> Կովկասի համար և մեծաստարքը հաշուած է հաւասար=1 դամէշի  
=5 ռշխարի, այժի=1 ձիու, ջորիի, աւանակի,  $\frac{2}{3}$  ուղտի:  
Օսմանատանի և ներզագի համար Ահօնի-ը և մեծաստարքը համա-  
րում է հաւասար= $\frac{2}{3}$  ձիու= $1\frac{1}{3}$  ջորիի, աւանակի, 10 հորթ ու ռշխարի=4  
խողի=12 այժի:

Երկիր	Բնակչութեան	Մեծասահմանական	Անդամականական	Հաշվառման	Առաջարկական	Անդամականական	Անդամականական
Առաջարկական	1052	13	31	5	6	—	55
Անդամականական	715	29	62	9	16	—	116
Անդամականական	914	39	67	8	17	—	131
Անդամականական	633	36	61	10	19	—	126
Անդամականական	709	39	29	4	12	—	84
Անդամականական	242	26	12	6	18	—	57
Անդամականական	192	19	86	5	9	—	119
Անդամականական	138 <sup>3</sup>	41	27	6	19	—	93
Անդամականական	51	74	76	9	23	—	182
Անդամականական	56	30	195	5	4	—	234
Անդամականական	567	69	103	18	25	—	264
Անդամականական	106	48	39	10	9	—	106
Անդամականական	61	56	111	8	6	—	181
Անդամականական	87	52	47	19	46	—	164
Անդամականական	—	—	—	—	—	—	104

Ինչպէս յայտնի է Կովկասի բալոր նահանգերը ունենալ  
լով լեռնային բնաւորութիւն ընդհանրապէս, իրանց օդի և մը-  
նութեամ խոնաւութեան աստիճանով արեմուտքից և ովկիանո-  
սի զով հոսանքներից գէպի արենելք և Ասիայի շամաքների խոր-  
քերը դասաւորւում են այս կարգով՝ Քութայիսի, Թիֆլիսի, Գան-  
ձակի, Բագուի, Դաղստանի, Երևանի, Կարսի։ Մօտաւորապէս այդ  
կարգով էլ իջնում է մեծատաւարի ու ձիու<sup>0/0-ը</sup> և ընդհակառա-  
կը բարձրանում ոչխարի, ջորիկ և աւանակի<sup>0/0-ը</sup>։ Այս տեսակ  
դասաւորման պատճառը այն է, որ բզոր միւս հաւասար պայման-  
ներում ոչխարը, այծը, աւանակը աւելի չոր, աւելի ցած բուօպկա-  
նութիւն սիրող կենդանիներ են, քան մեծատաւարը, ձին։ Աւելի  
ցուրտ և աւելի հարթ կարսի շրջանի հարստութիւնը մեծատա-  
ւարով ու ձիով և նրա աղքատութիւնը մանրատաւարով համե-  
մատած հարեան Երևանի նահանգի հետ, չի հակասում վերը ա-  
սածներիս, այլ ընդհակառակը՝ կողմնակի կերպով ապացուցանում  
է։ Նոյն տեսակ կողմնակի ապացոյց է ասածներիս և մեր աս-  
րերի աշխարհի» (Դաղստանի) առատութիւնը մանրատաւարով  
և սակաւութիւնը մեծատաւարով։ Աւելի խոնաւ և նոյն իսկ  
ձահային երկիրների կենդանիներ են զութէն ու խոզը, եւ թէ  
չը լինէին Կովկասում կրօնական այլ բաժանումներ ու մի քանի  
ուրիշ պատճառներ, որոնց մասին յետու, խոզերի տարածման մե-

\*). *О. М. Грибакин* в «Граническое краеведение» № 1 за 1901 г. пишет:

բարերմամբ մենք կը նկատէինք նոյն կանոնաւորութիւնը, թէ է հրմա էլ խոնաւ թութայիսի, միջակ թիգլիսի և չոր Գանձակի, թագուի, Երևանի նահանգների համեմատութիւնը (խոզի քանակութեան վերաբերմամբ) որոշ չափ ապացուցում է ասածներս: Դժբախտաբար, վիճակագրութեան մէջ գոմէշը չի բաժանուած մէծատաւարից, որպէս զի մենք կարողանայինք նոյն օրէնքը թուերով պարզել և գոմէշի վերաբերմամբ: Բայց ով եղել է Երևանեան դաշտի «Ղարասուների» ամերի և միւս ջրով առաջ գիւղերում, ով տեսել է Շամախու գաւառի Մազրասի շրջանի գիւղերը, ուր խաղողը բուռնում է առանց ջրի, ով ապրել է խոնաւ Զաքաթալի անտառներում, կը համաձայնի ինձ հետ որ գոմէշները յիշուած տեղերում կազմում են մէծատաւարի  $\frac{1}{2} - \frac{1}{3}$  մասը և որ գրա պատճառը ջրերի և ճահիճների առատութիւնն է, որ գոմէշի և խոզի համար հանդիսանում է ամենունպատաւոր պայման: Յոյորովին հակառակ տիպար են Ներկայացընում ջորին, աւանակը և մանաւանդ ուղար, որ լինելով ամայի քարոտ անապատների կենդանիներ, տարածուած են Կովկասում, առաջինները քարոտ լեռնային շրջաններում, իսկ վերջինը Բագուի և Երևանի նահանգների ջրից զուրկ, «շորային» շրջաններում:

Որ Կովկասում գոյութիւն ունեցող տարբերութիւնները այս կամ այն կենդանին պահելու վերաբերմամբ հասարակ «քէֆի» և «կամքի» հետեանք չէ, այլ առաջ է եկած տեղական բնական և հասարակական պայմաններից, դա պարզում է և եւրոպական պէտութիւնների օրինակով:

Աւելի չոր և լեռնային բնաւորութիւն ունեցող Անդրկավեկասը համեմատած տեղի խոնաւ և աւելի հարթ եւրոպական Ռուսաստանի հետ, ունենալով ընդհանրապէս անասունների միւնոյն քանակութիւն (75-ի 70 մէծատաւարի վերածած), շատ անգամ աւելի ոչխար և ուղտ է պահում, քան Ռուսաստանը, բայց միւնոյն ժամանակ երկու անգամ աւելի պակաս խոզ և ծի: Վերջինիս տեղը Կովկասի լեռնոտ և չոր տեղերում (Երևան, Ղարաբաղ, Դաղստան, Ռաճա) բռնում են աւանակները, ջորիները և ուղտերը: Ամենից առաջ Կովկասին անասունների տեսակներով մօտենում է Ռուսաստանի ամենաչոր նահանգը—Տաւրիկեան—որ, սակայն (իր հարթութեան պատճառով երեկի) անհամեմատ աւելի ծի է սննդում քան Կովկասը: Սիրիբիտայի խորքից դէպի թուրքատան ու Անդրկասպեան երկիրը խոնաւութեան պակասելու հետ միասին մենք տեսնում ենք, որ պակասում է և մէծատաւարի ու ծիերի քանակութիւնը, աւելանում ոչ խարների, ուղտերի (և, հաւանական, աւանակների, ջորիների) թիւը:

Եւրոպայի տաք և չոր հարաւից սկսած դէպի աւելի խոնաւ և ցուրտ հիւսիսը մեծատաւարը աւելանում է, մանրատաւարը պակասում:

Այսպէս՝ աղդաբնակութեան ամեն մի 100 հոգուն դալիս է.

Ո՞ր երկիրներում:

Մէծատաւար Մանրատաւար:

Փորթուգալիա, Սպանիա, Յունաստան	16	19	19	99, 175, 284
Ֆրանսիա, Գերմանիա, Աւստրիա	29,	39,	36	62, 67, 61
Բելգիա, Անգլիա, Հոլանդիա	26,	19,	41	12, 86, 27
Նվեդիա, Նորվիչիա	.	.	48,	56

31, 111

Ճիշտ է, հարաւային երկիրների մէջ նոյնպէս կան այնպիսիները—Ռումանիան ու Սերբիան՝ օրինակ,—որոնք տալիս են մէծատաւարի բաւականին խոշոր թիւ (62, 61) և նոյնքան, ինչքան և հիւսիսի իրանդիան ու Դանիան (74, 69), բայց, նախ՝ որ այդ երկիրները իրանց բնական ճոխ արօնակրով մէծատաւարի համար ներկայացնում են շատ յարմարութիւններ և երկրորդ՝ նոյն հարաւի Ռումանիա և Սերբիա մանրատաւարը համեմատաբար աւելի շատ է, քան աւելի հիւսիս իրանդիա և Դանիա:

Մի կողմից Սերբիայի խոզի ահազին տոկոս տալլ (106 հատ ամեն 100 հոգուն) չնորհիւիր ածարի անտառների ու խոնաւ, սիմինդր տուող Դանուբի հովանների և միւս կողմից լեռնոտ Շոտլանդիայի համեմատութիւնը աւելի հարթ և խոնաւ իրանդիայի, Դանիայի և Հոլլանդիայի հետ, ակներն կերպով պարզում են թէ ինչ մեծ նշանակութիւն ունեն տեղական աշխարհագրական պայմանները և ինչ չափ լեռնոտ երկիրները նպաստում են մանրատաւարի զարգանալուն, հակառակ մէծատաւարի, խոզի և ծիու, որոնց պահելը աւելի ճեռնոտ է աւելի հարթ երկիրներում:

Բայց կայ և մի այլ հանգամանք, որ խաղում է շատ խոչը գեր այս կամ այն տեսակ անասուններ պահելու վերաբերմամբ—գա աղդաբնակութեան խտութիւնը և զանազան երկիրների կուլտուրական բարձրութեան աստիճանն է:

Ամեն մի երկրում ժողովրդի բազմաւալու հետ միասին վարելանողերը շատանում են, իսկ արօնակրով պակասում: Ճիշտ է, որ արա հետ միասին լաւանում (ջրում, պարարացնուում, քարից մաքրուում են) մնացած արօնակրոը, որի հետ միասին աւելանում է ամեն մի օրավար արօնի տուած խոտը: Ճիշտ է, որ վարելանողերը բացի հացից տալիս են անասունների համար և յարդ (համարեան խախին բնական խոտահարքից ստացուած խոտի չափով) և որ խիտ երկիրներում հացահատիկների մի մասը տրուում է և անասուններին: Բայց, անսուամենայինի, ժողովրդի բազմանալու հետ միասին անասունների թիւը շատանում է

աւելի պակաս չափով և ամեն մի 100 անձնաւորութեան վրայ տարէցտարի գալիս է աւելի պակաս թուով ապրանք։ Պաշտօնական անասնագրութիւններին նայած, Եւրոպական Ռուսաւտանում 1857-ից մինչև 1883-ը \*), օրինակ, ամեն մի 100 անձնաւորութեան վրայ անասունների թիւը իշխում է այս չափով.

	1857-ից. 1883-ը
Զիերի	263-ից 228-ի կամ 135%
Մեծատաւարի	371 » 301 » 19 »
Ոչխարի	721 » 594 » 176 »
Խոզի	153 » 120 » 220 »

Իուսաստանի վեց ներքին նահանգներում, ուր զեմստվանները մանրամասն հետազօտած են անասնապահութիւնը, 1858-ից մինչև 80-ական թուականները ընդհանուր առմամբ ձիերի թիւը աւելցած է 20%, թէս ամեն մի 100 անձնաւորութեան վրայ 1858 թուին հաշւում էր 432.

Իսկ 1880-ին . 344 ձի։

Գ. Շապէնի \*\*) ասելով 30-ական թուականներին ամեն տեսակ անասուններ հաշւում էր Հայկական Շրջանում 534 հազ. Նոր-Բայազէթի գաւառում 83 հազ., կամ ամեն 100 անձի վրայ 325 և 360 հատ. 1884—85 թուականներին, երբ ազգարնակութիւնն աւելցած էր՝ Հայկական Շրջանում 232% (164-ից մինչև 534 հազ.); Նոր-Բայազէթի գաւառում 354% (228 հազարից 1036-ի), պետական հողերի վրայ ապրով զիւզացիների անասունների թիւը հաւասար էր (հաշուած և Ալեքսանդրապ. գաւ). ընդամենը՝ երե. նահ. 1182 հազ. Նոր-Բայազ. գաւ. 267 հազ., կամ 100 անձին 292 հատ . « « 316 հատ:

Այսինքն, այն ժամանակ, երբ 55 տարուայ ընթացքում ազգարնակութիւնը աւելանում է 31/2 և 41/2 անգամ, անասունների թիւը աւելանում է աւելի պակաս չափով, ուստի և ամեն մի 100 անձնաւորութեան վրայ հիմա 33 և 44 ապրանքով (10—12% ով) աւելի պակաս է հաշւում, քան էր կէս գար մեզանից առաջ։ Ազգարնակութեան բազմանալով և խտանալով բացատրում է և այն, որ 100 հոգու վրայ հաշւում է անասուններ («մեծատաւարի» վերածած)։

Խիտ երեանի (443 մարդքառ. վերստի վրայ) և Քութայիսի (357) նահանգներում... 124 և 53 մեծատաւարի խոկ աւելի նոր Կարսի (189) և Թիֆլիսի (232) 146 և 197։

\*) А. Фортунатовъ. с. х. статистика. Москва, 1893 г.

\*\*) Исторический памятникъ Армянской Области, СПБ. 1852 г.

Նոյն պատճառով բացատրում է և այն հանգամանքը, որ զանազան խտութիւն ունեցող երկիրներում 100 անձի վրայ համարում է ընդամենը անասուն («մեծատաւար»).

Կիսաամայի հարաւ. Սիրիիայում. (25 խտութ.)	253—527
Միջակ խտութ. ունեցող Ծուա. և Անդրկ. (223—253)	73—70
Խիտ միջին Եւրոպայում . . . .	(633—914) 54—58
Նաև խիտ Սնդիկա և Բևլիկա . . . .	(192—242) 36—37

Սակայն միակողմանի կը լինէր միայն ազգարնակութեան խտութեամբ բացատրել զանազան երկիրների անասունների քանակութիւնը. Մեծ դեր են խաղում այստեղ նաև այլ և այլ շըրջանների բնական պայմանները, ինչպէս և նոյն երկիրներում ապրող ազգերի կուլտուրական բարձրութիւնը.

Շուէցիա և Նորվէզիա, օրինակ, պահւում է նոյնքան ապրանք, ինչքան և Դանիա, Իրլանդիա և Շոտլանդիա, թէև վերջններս 6—8 անգամ աւելի խիտ բնակութիւն ունեն, քան Սկանդինավեան թերակղզին. Պատճառն այստեղ այդ երկիրների ժողովուրդների կուլտուրական տարրերութեան մէջ չէ, այլ նրանում, որ ճահիճները, ժայռերը, անտառները Շուէցիա-Նորվէզիայում այնքան շատ են, որ շատ քիչ տեղ են թողնում մակուրեան ու արօսների համար։ Երկրի մակերեսոյթի 1000 մասից\*) յիշուած երկիրներում զանազան կարգի հողերը կազմում են.

Խնչ տեսակ հողեր.	Նորվէզիկիա. Շուէցիա. Բրիտան. Դանիա.
Մշակութեան համար անպէտք .	711 402 246 178
Անտառի տակ . . . .	240 477 39 71
Սրոտ և մարգագետին . . . .	28 36 441 309
Վարելու և այլ մշակուող հողեր .	21 85 174 442

Արօտներն ու վարելահողերը, այսինքն այն հողերը, որով մննդում են անասունները, երկրի 1000 մասից կազմում են.

Շուէցիա և Նորվէզիա . . . .	44—121
Խոկ Սնդիկա և Դանիա . . . .	615—751

Այդ պատճառով, ամեն մի անձի վրայ ինչպէս խիտ Բրիտանիա ու Դանիա, նոյնպէս և արձակ Շուէցիա-Նորվէզիա, գալիս է համարեան հաւասար տարածութիւն արօտի և մշակ-

\*) Сравнит. стат. данные важнейшихъ государствъ. „Русский Календарь“ Суворина за 1901 г.

ուող հողի որ և հարկադրում է համարեա հաւասար թուով  
մնուցել կենդանիներ:

Տաք, արօտներով աղքատ այգեգործական Փորթուգալիա և  
Իտալիա 100 հոգուն «մեծատաւար» հաշւում է.

Խիտ (1052) Խտալիա . . . . .	23
Աւելի աղքատ (508) Փորթուգալիա . . . . .	36

Այն ինչ, նոյնպէս երկու անգամ Փորթուգալիայից խիտ Գերմանիան (914) տալիս է համարեա երկու անգամ աւելի ա-  
նասուն (58) և զա շնորհիւ, ի հարկէ, իր փարթամ մարզագե-  
տինների: Նոյնն է և մշուշով պատաժ լեռնային Շօլանդիան,  
որ երկու անգամ Փորթուգալիայից աւելի ապրանք է մնուցա-  
նում (57), չը նայած որ ազգաբնակութեան խտութեամբ «փոր-  
թուգալի» հայրենիքից չի տարբերում (56):

Բացի անասունների քանակութեան պակասելուց, ամեն մի երկրի աղքաբնակութեան խտանալու հետ միասին փոխւում  
է և անասնապահութեան ձեր, փոփոխութեան է ենթարկուում,  
այսպէս ասուած՝ սնուելիք անասունների որակութիւնը: Երեա-  
նեան նահանգի թափառականները ընդհանրապէս 2 անգամ ա-  
ւելի ապրանք սնուցանելով մշտակեացներից (260 հարիւրին  
124-ի տեղ) անասունների առանձին անսակներից պահում են.

Մեծատաւարը հաւասար թուով . . . (88—78-ի տեղ)	
Ոչխար, այծը 4 անգամ աւել . . . 735—177 » )	
Չի, աւանակ, ուղարք $2^{1/2}$ անգամ աւել . ( 27—10 ) » )	

Հարկաւ, սրա պատճառը այն է, որ շնորհիւ հողերի սա-  
կաւութեան, շնորհիւ հողագործների կապուած լինելուն այս  
կամ այն վայրի հետ, շնորհիւ ձմեռուայ համեմատական մեծ պա-  
շարի, մշտակեաց աղքերին աւելի ձեռնտու է մեծատաւար, ձի,  
աւանակ պահելը, քան ոչխար, այծ: Միւս կողմից երկրագործ  
ժողովուրդների աղքաբնակութեան խտանալու հետ միասին աւե-  
լի ձեռնտու է լինում աւելացնել մեծատաւարի, մանաւանդ  
կթանի, խոզի (և թուշունների) քանակութիւնը, պակասեցնելով  
կամաց-կամաց մանրատաւարի թիւը:

Եթէ երեանեան նահանգի Ալեքսանդրապօլի գաւառում ա-  
մեն 100 հոգուն գալիս է  $1^{1/2}$  անգամ աւելի մեծատաւար, քան հա-  
մարեա նոյն գօտիում զանուած նոր-Բայազէթի գաւառում (127  
և 81) և այդ էլ այն ժամանակ, երբ ոչխարի թիւը այդ գաւառնե-  
րում հաւասար է (224 և 226).—զրա զիսաւոր պատճառը այն է,  
որ Ալեքսանդրապօլի գաւառը երկու անգամ աւելի խիտ է, քան  
նոր-Բայազէթի գաւառը (46 և 23):

Ալեքսանդրապօլի գաւառի սակաւահող ժողովրդին հողա-  
գործական աշխատանքները բաւարար կերպով կատարելու հա-  
մար աւելի նպատակայարմար է աւելի ոյժ տալ մեծատաւարին,  
քան ոչխարին: Նոյն պատճառից զրդուած Կովկասի խիտ բնա-  
կութիւն ունեցող մասերի աղքաբնակութիւնը (իմերէթ, կա-  
խէթ, Արարատեան գալո) պահում է զիսաւորապէս մեծատա-  
ւար և շատ տեղեր նոյն իսկ միայն լծկան և կթան: Սա էլ  
բաւական չէ: կան տեղեր, ուր նոյն իսկ այս լծկան ու գութանը  
մնուցանում է ոչ թէ իր տեղում, այլ գնւում հողով և արօտով  
աւելի առատ շրջաններում (Արդահան, Ախալքալաք, Նոր-Բայա-  
զէթ, Սիսիան և այլն):

Նոյն բանը նկատում է և Եւրոպայում:

Համեմատած բոլոր անասունների ընդհանուր թուին  
(վերածած «մեծատաւարի») անասունների քանակութիւնը կազ-  
մում է.

Կիսամայի Սիրիրիայի Տօմսկի նահանգում (26 խտ.) 402<sup>0/0</sup>  
Նոյն բնակութեամբ Եւրոպ. Ռուսաստան (233 ») 45<sub>3</sub> »  
Խիտ { Ֆրանսիա, Գերմանիա, Աւստր. (715, 914, 633) 54, 61, 62 »  
Խիտ { Ամերիկայի Միացեալ-Նահանգ. (87 . 3) 50 »  
Ամենախիտ Հոլլանդ., Անգլ., Բելգիա (1883, 192, 242) 82, 53, 70 »

Հարաւային երկրներից:

Միջակ խտութ. ունեցող Սպանիա, Յունաստան (346, 336)—34<sup>0/0</sup>  
Խիտ իտալիայում (1052 . . .) . . . . . 57 »

Նոյնն է և խողի վերաբերմամբ: Ժողովրդի խտանալու հետ  
միասին նոյն չափով և նոյն իսկ աւելի արագ կերպով, շատա-  
նում է և խողերի թիւը: Դրան ապացոյց են ոչ միայն Կովկա-  
սի զանազան խտութիւն ունեցող շրջանների համեմատութիւնը,  
այլ և ամբողջ Եւրոպայի թուերը: Ծնորհիւ իր յատկութիւննե-  
րի, խողը պատճառում է այն տեսակ կենդանիներին, կերակրուում են ամեն  
ինչով: Դրա պատճառով խող պահելը ամենածեռնտուն է լի-  
նում ամենախիտ վայրերում, ուր համեմատաբար դժուար է  
կերակրել միւս կենդանիներին: Եւ եթէ մեր Կովկասում մխողերի  
թիւը համեմատաբար պակաս է, դա վերազրելու է միմիայն  
նրան, որ մահմեղականները ֆիզիկական և բարոյական ճնշում  
են գործ գրած քրիստոնեաների վրայ: Երկրի շահը պահանջուում է  
որ այդ աղքեցութիւնը կարելիին չափ չուտ թուլանայ և ոչնչանայ,  
որի հետ միասին կը աւելանայ և ժողովրդի եկամուտը, մանա-  
ւանդ իմերէթ, կախէթ, Երևանեան դաշտում, ուր բայց ժողո-

ՎԵՐԴԻ ԽՄԱՊԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՆԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՆ ԱՅդ ԿԵՆԴՐԱՆՈՒ ՌԱԳՄԱՆԱԼՈՒՆ:

Բնական պայմաններից ու ազդաբնակութեան խտութիւնից յետոյ ամենամեծ նշանակութիւնը անամսապահութեան համար ունի ամեն մի նրկրի տեխնիկայի զարգացումը և կուլտուրական բարձրութիւնը։ Երեանեան նահանգի թափառաշրջիկ քրդերը, ինչպէս յայտնի է, ապրում են նոյն շրջանում ու պայմաններում, ինչ պայմաններում ապրում են և հայերը ու միւս խաղաղ ազգերը։ Քրդերը 3—4 անգամ աւելի հող ունեն հայերից, բայց չը նայած դրան, նրանց ամեն մի 100 հոգուն հաշուում է 260 անասուն (մեծատաւարի հաշուով), իսկ մշտակեացներին՝ 124։ Երեք-չորս անգամ հայերից աւելի հող ունեցող քրդերը միայն երկու անգամ աւելի ապրանք ունեն։

Դրա պատճառը ի հարկէ նա է, որ քրդերը թափառական ներ են, մշտակեացներից կուլտուրապէս դած: Նոյն բանը մնաք տեսնում ենք Խրիզների քջանում, ուր չը նայած աղքաբնակութեան սակաւութեան (10 անգամ Կովկասից պակաս), անտ սունների քանակութիւնը միայն 2 անգամ կամած:

Անդրկովկասը բնդհանրապէս, Եւրոպ. Ռուսաստանը, մի-  
ջին Եւրոպան և Ամերիկայի Միացեալ-Նահանգները գտնւում են  
մօտաւորապէս միենոյն բարեխսառն գօտիում ու պայմաններում,  
բնակուած են Ընդհանրապէս խաղաղ ազգերով, բայց մի-  
մեանցից զգալի կերպով տարբերուում են իրանց ժողովրդի  
կուլտուրական բարձրութեամբ:

Ամեն մի 1,000 մասից այդ երկրներում զանազան կարգի հոգեբար սպառվել են.

Անգլիական հոգեր	Անդրբ- կովկաս.	Երևակ. Աւատր. Գեր- ման. բան. Մ. Հան.	Ամեր-		
Անպէտք զիւղատն. համար. 266	191	61	91	143	33
Անտառի տակ . . . 212	388	326	258	158	103
Արօտ և մարդագետին . . . 330	159	238	163	105	711
Վարելահո և այլ մշակուող 192	262	375	488	594	153
Արօտ և մշակուող . . . 522	421	613	651	699	864

Աղիւսակից պարզ է, որ միւնոյն տարածութեան վրայ միջին Եւրոպան՝  $1\frac{1}{2}$  անգամ աւելի բնական միջոցներ (արօտ, մշակուող հող) ունի անասնապահութեան համար, քան Եւրոպական միուսասանը, իսկ Ամերիկայի Միացեալ-Նահանգները՝  $1\frac{1}{2}$  անգամ Եւրոպայից և երկու անգամ Բրիտանականից աւելի

Ի սկատի ունենալով այդ հանգամանքը, ամեն երկրի առանձապահութեան չափը որոշելիս, մենք պարտական ենք հայ-

ուի առնել այն հողի տարածութիւնը, որ կարող է ծառայել անասնապահութեան համար և հարկ եղած հաշիւները անելուց յետ մենք կը ստանանք հետեւել թուերը:

	100 անձի գրայ հաշում է.	100 դեմ.
Ո՞ր երկրում.	Ազգաբն. Հող Արօտ և Անասոն բելահողին խոռու- Ենթհան- վարե- և մեծառ. հաշում է թիւն բապէս լահող հաշուի և մեծառ.	արօտվա-
Պրկովկաս . . .	255 408 213 695 326	
Առպ. Ռուսաստան . . .	223 470 196 75 383	
Մարիա . . .	633 160 98 58 592	
Թմանիա . . .	914 110 72 58 801	
Անսիա . . .	715 140 98 54 511	
Արիկ. Միաց.-Նահ. . .	870 115 99 104 1050	

Անդկովիլասից ու Երոպական Խուսաստանից 3—4 անգամ աւելի խիստ ազգաբնակութիւն ունեցող Երոպան ունի միայն 2 անգամ պակաս անասնաբնաւթեան համար պէտքական հող և միմիայն  $11\frac{1}{2}$ —2 անգամ սակաւ անասնները

Աւելի նպաստաւոր դրության մէջ են Ամերիկայի Միացեալ-Նահանգները։ Անասունների կերի համար անհրաժեշտ հողի արածութիւնը այդ երկրում նոյնն է, ինչ որ Եւրոպա և 2 անգամ զբակա Ռուսաստանից ու Կովկասից։ Զք նայած զրան, միջակ ռամերիկացի քաղաքացին 2 անգամ երրորդացուց և 3 անգամ ոռուսաստանցուց ու կովկասցուց աւելի կենդանի ապրանք է մնուցանում։ Ամեն մի 100 դես. անասուններ սննդող արօտ վարելահողի վրա միծատաւար տահութ են.

Յետ մնաղած Ծովասատանն ու Կոմիսար . 382 322

Կիսարիստոկրատթէն կրթուած միջին Եւրոպ. 51<sub>1</sub>, 592, 801  
Արեմուտի առաջառէմ կ ոեթօնատիլսիան.

Մեծ Հանրապետութիւնը 105  
Կամայ ակամայ մարդ ընկնում է մտառանջութեան մէջ, թէ  
ինչ է այս տարբերութիւնների պատճառը, ինչ միջոցների պէտք  
է դիմնեք մենք, որպէս զի գուրս գանք ներկայի մեր անմխի-  
թար վիճակից:



эспарцетъ) ցանքս, իսկ Նախիջևանի գաւառի մի քանի գիւղերում յայտնի է մի նոր խոտ «շամբալա» անունով (trigonella faecum graecum, греческое сено). յիշած տեսակներն էլ գուցէ բաւական լինէին մեր երկրին, եթէ բռնելիս լինէին շօշափելի տարածութիւն:

Տարաբախտաբար ժողովրդին յայտնի խոտերի տեսակների ցանքսը բռնում է Կովկասում շատ չնչին տարածութիւն։ Ի բաց առեալ Արարատեան և Միօնի հովիտները, ուր հողի սակաւութեան պատճառով հօնջան ու «կոլինդրարին» տեղ-տեղ բռնում են  $\frac{1}{5}$ — $\frac{1}{4}$  մասերը, մնացած տեղերի խոտհարքները և մանաւանդ ցանքսի մարգագետինները չեն հասնում և մի քանի տոկոսի:

Երեանեան գաւառում, օրինակ, պետական գիւղացիների խոտհարքների (ըստ երեսյթին ցանքի) տարածութիւնը \*) հաւասար է 27 հազ. դեսետինի 1082 հ. դ. հողից, կամ կազմում է գիւղացիների հողերի  $25^0/0$ : Նոյն է Ալեքսանդրապոլի գաւառում: Արենեատական խոտհարքները այդտեղ շատ քիչ են, իսկ բնական խոտհարքները 2473 հ. դեսետինից կազմում են 56 հազ., կամ պետական գիւղացոց հողերի  $28^0/0$ -ը:

Աւելի վատ է Նախիջևանի գաւառի պրութիւնը, ուր գիւղացիների 879 հազ. դ. հողերի մէջ համարեա խոտհարք չը կայ. Զը նայած այս աղքատ թուերին, Երեանեան նահանգը համարուելու է համեմատաբար ամենից առաջադէմը այս կողմից: Այն ժամանակ, երբ այդ նահանգում պետական գիւղացիների հողերից արենեատական և բնական խոտհարքները կազմում են  $40^0/0$  (389 հազ. 977 հ.-ից), Բագուի նահանգում, ուր արենեատական մարգագետիններ համարեա չը կան, միմիայն բնական խոտհարքները նոյնպէս բռնում են միայն հողերի  $44^0/0$  (443 հ. դ. 10575 հ. դ.-ից)...

Այլ գրութիւն ենք տեսնում մենք Եւրոպ. Ռուսաստանում և մանաւանդ Եւրոպայում: Ռուսաստանում ամբողջ տարածութեան  $\frac{1}{12}$  կամ  $80^0/0$  կազմում են խոտհարքները (342 միլ. դես. 441 միլիօնից), որից մօտ  $\frac{1}{3}$  ծածկւում են գարնանը ջրով: Երկրի զանազան մասերը այս հարցից վերաբերմամբ միմեանցից շատ տարբերում են՝ հիւսիսային (հողով առատ) մասում խոտհարքները բռնում են մօտ  $60^0/0$ , հարաւային (սևահողային) շըրջանում  $120^0/0$  \*\*):

\*) Ведомость о раскладке оброчной подати и земельного налога на 1901—1903 гг.

\*\*) Янсонъ, С. х. статистика.

## Գլ. II

Երեանեատական խոտացանքսի մշակութեան բացակայութիւնը մեզանում Անասնապահութեան և կաթնատնտեսութեան տեխնիկայի ընկած դրութիւնը.—Խոզագործութիւնը և աղջն.—Անասնապահութիւնից և կաթնատնտեսութիւնից ստացած մթերքների գների ցածութիւնը և այդ ճիւղերի եկամուտը.—Համեմատութիւն մեր և ուրիշ երկների:

Անդրկովկասի և Եւրոպական Ռուսաստանի անասունների քչութեան գլխաւոր պատճառներից մէկը նա է անկասկած, որ մեր երկրում շատ քիչ դեր է խաղում խոտի արենեատական ցանքսը:

Այն ժամանակ, երբ Եւրոպայում,—մանաւանդ նրա հիւսիսային աւելի ցուրտ և խոնաւ մասերում,—ցանքի մարգագետինները բռնում են ահագին, տարէց տարի աւելանող, տարածութիւն, մեզ մօտ դրա մասին շատ տեղեր գաղափար անգամ չընեն: Ամենատարածուած ցանքի խոտը կովկասում, մանաւանդ Արարատեան դաշտում, անկասկած եօնջան է (pedicago sativa, լիօզերա): Եօնջի ցանքսը ջրովի տեղերում տարէց տարի շատանում է և տարածւում նոր տեղեր: Միօնի հովտում շատերը իրանց բակերի մէջ ցանքում են «կոլինդրարի» անուանեալ խոտից (Lolium italicum, թէ L. perenne, բայց բայց տեղ-տեղ գործ է ածւում «ուղբեկինի», «քիւրուչնա» անուանեալ (vicia, կամ սիսեռի ցեղից բայց) բոյսերի խոտը և սերմը (վերջինս գոմէշների համար): Վերջապէս, Երեանի և կարսի նահանգներում, գլխաւորապէս կրային հողերի վրայ, ինձ պատահել է տեսնել «կորինդանի» (կարմիր եօնջի, Orobrychis sativa,

Աւելի նպաստաւոր պայմաններ են Եւրոպայում \*), մրան-սիայում ու Անգլիայում, օրինակ, երկրի տարածութեան ամբողջ պէտքական մասից.

Արօտ և բնական խոտաբանները բռնում են 165—472%.

Խոտացանքսերը և արհեստ մարգագետինները 58—131 »

✓ Տակերի մշակութիւնը անսառնների համար 12— 53 »

Նոյնն է համարեա և Աւտորիա ու Գերմանիա, ինչպէս և աւելի հիւսիսային և խոնաւ Դանիա, Շվեդիա, Նորվիյա...

Համեմատելով վերջի թուերը մեր երկրի թուերի հետ, մեզ համար պարզ կը լինի՝ ինչ պատճառով յետ ենք մնացած մենք բաւարար քանակութեամբ խոտ և առհասարակ «կեր» ունենալու կողմից։ Այն ինչ, այն բոլոր խոտերի տեսակները, որ ցանում են Եւրոպայում, բռնում են և մեր երկրում, մասնաւանդ ելանային մասերում։

Երկնուկի, տայտի, սիրի-սիրիի, խնձորածաղկի, սարի և օնչայի (Trifolium, կլեвер) կարմիր, սպիտակ, գեղին և ալտեսակները, գորնախոտը, գորնուկը կամ որո՞մն շատակեացը (Lolium, րայգրաս), տիմոֆէուսեան չայիրի խոտը (phleum pratense, տիմոֆеева трава), արոտածիլը կամ ոչխարախոտը (roa campresse, մալтиկъ), աղուէսախոտը, պոչուկը (aleropocurus pratens., լոսօխօստъ), խրբուկախոտերը կամ վարսակախոտը (avena և festuca, օվсяնици), մարառոյտը կամ եօնչան, առոյտը (medicago sativa, լուցерна), ձիակորեկը (panicum italicum, մօգար) ուպը, ոլորը, կորինդանը (onobrychis sat., էսպարցетъ), վարի աշորան—սրանք բոլորը բռնում են առատութեամբ մեր արօտներում ու խոտաբաններում և կասկած չը կայ որ դըրանց արհետական ցանքը ստանալու է մեր երկրում մեծ ծաւալ։

Այնտեղ, ուր այսօր քաղցում է 80—100—150 պուդ խոտ, մշակութեան, պարարտացման և ցանքսի չնորհիւ կարելի է ստանալ 200—300 պ., իսկ բացառիկ գէպերում (ջրարբի, պարարտ տեղերում) և 500, նոյն իսկ 1000 պուդ։

Տասը տարի սրանից տասչ խոտի ցանքը Ռուսաստանում պատճում էր իբրև բացառութիւն մի քանի մասնաւոր կալուածքուներում, բայց չնորհիւ գէմսովների գիւղատնտեսների քարոզի և մանաւանդ կենդանի փորձերի, Ռուսաստանի շատ նաևնդներում (Տվյրի, Մուկուայի, Եարօնավի, Նօվգորոդի, Կոստ-

րամայի, Վոլոգդայի, Վնատասկայի, Տուլայի, Սարատովի և այլն) խոտերի ցանքը տարածւում է շատ արագ կերպով և տեղ աել բռնում է արդէն գիւղացիների հողերի տարածութեան 5—10% -ը։

Անհետաքրքիր չէ մեզ համար որ Ռուսաստանի հարաւային աւելի տաք նահանգներում ցանւում է գիխաւորապէս եօնչան, կորինդանը, ձիակորեկը, և մանաւանդ երանում անուանալ խոտը։

Ռուսաստանի միջին գոտիում—խրբուկը խառը պուրազի, վիկու-ի հետ (vicia, վիկա), ցորնախոտը, աղուէսախոտը և երեք-սուկը կամ սիրի-սիրին։ իսկ հիւսիսում վերջինս և մանաւանդ ցորնախոտը, ինչքան մեծ նշանակութիւն ունի խոտացանքսը Ռուսաստանի գիւղատնտեսութեան համար, երեսում է նրանից թէ ինչ մեծ տարրերութիւն կայ ցանովի և միւս տեսակ խոտացանքների մէջ։ Մուկուայի գիմսավօի գիւղատնտես Բաժանվի\*) ասելով մի գեսետին խոտաբան հիւսիսային Ռուսաստանում տամա է միջին թուով։

Չոր դաշտի խոտհարքներից	65	պուդ.
Անտառի թալաների	70	»
Հովիտների	95	»
Գարնանը ոռոգուող	140	»
Արհեստական ցանովի	200	»

Աւելի հարաւային և տաք նահանգներում պ. Դեակօվի հաշուով գեսետին խոտհարքը տալիս է միջին թուով։

Ինչ կարդի խոտհարքներից	Կուրսկի գործների	Կատարեան գործների
Դաշտային	. . .	96 68 78
Անտառի	. . .	90 92 —
Հովիտների	. . .	142 138 108
Գարնանը ոռոգուող	. . .	154 176 134
Արհեստական ցանովի	. . .	175 163 157

Միւս բոլոր հարաւար պայմաններում խոտացանքսը 1<sup>1/2</sup>—2 անգամ աւելացնում է բերքը, չը հաշուած նա, որ ցանովի խոտը աւելի մաքուր և մննդարար է, քան բնական չայիրներից

\*) Ботаевъ, Дьяковъ, Кормовая площадь Россіи. Полная энциклопедія русского сельского хозяйства.

ստացուած վշերի հետ խառը և շատ անգամ ճլոտ «կերը»: Խուստացանքսի արագ տարածման, բացի աւելի առատ բերք ստանալուց, նպաստում է և նա, որ ուժասպառ, յոդնած տեղերը ցանելով՝ միջոց է տրում հողին հանգստանալ, պարարտանալ բնական կերպով: Բացի այդ, վերջերս ապացուցուած է համարւում, որ եօնջան, սիրի-սիրին, կորինդանը և խոտերի միւթիթեռակերպ ցեղին (parillonaceae) պատկանող տեսակները, չնորհիւ իրանց արմատների բացառիկ կազմի, կարողանում են իւրացնել օդից ազատ բորակածին և դրանով հարստացնում են հողը շատ մեծ կարեռութիւն ունեցող նիւթերով:

Մինչև խոտերի ցանելը Ռուսաստանում հողը 2 տարի ցանուելուց յետ մի տարի հանգստանում էր: Հիմա, խոտացանքսի չնորհիւ միջոց կայ այդ տարին չը կորցնել, ստանալ 2 անգամ առաջուանից աւելի խոտ և բացի դրանից պարարտացնել հողը: Նամանաւանդ դա կարենոր է այն պատճառով, որ խոտերի ցանքսը առանձին աշխատանք չէ պահանջում, իսկ մոտ մը թանգ չէ: Խոտի սերմ ամեն մէկը կարող է ժողովել հէն յիր բնական չայիրներից: Դրա համար հարկաւոր է միայն խոտի հունձը խոտհարքի լաւ տեղերում յետաձել 2 շարթով, մինչև սերմը սկսի համեն և դեղնել: Այդ ժամանակ խոտը կարելի է հնձել և տրորելով անասունների կամ մարդկանց ոտքերով բաժանել խոտերի հասկն ու սերմը ծղնոտից: Ցանկացողները կարող են խոտերի սերմը գնել նաև շուկայում<sup>\*)</sup>: 4—10 ոուբուզ շատ մանր սերմ ունեցող խոտերի պատզը:

Առասարակ խոտը ցանում են աշնանը կամ զարնանը միւթ ցանքսերի հետ, երբ հացահատիկը արդէն ցանուած և տափուած է լինում:

Նայած խոտին, սերմի քանակութիւնը տարբերւում է: Կորինդանի, քիւրուչնայի սերմ վերցնում են 6—12 պուդ, եօնջի » »  $1\frac{1}{2}$ —2 » Երկնուկի (սիրի-սիրի), որոմնի  $\frac{3}{4}$ —2 »

Նայած սերմի մաքրութեան, մեծութեան, հողի պարարտութեան, Ցանքսը հեշտացնելու համար, խոտի սերմերի հետ խառնում են աւազ, կամ աւազային հող, որպէս զի կարելի լինի ցանքսը անել հաւասար և այն չափով, ինչ չափով անւում է ցորենի և զարու ցանքսը:

Խոտերի սերմերը ծլում են ցորենի եւ գարու հետ, բայց

<sup>\*)</sup> Խոտերի սերմեր կարելի է գտնել կամ երեան կամ յալոնի սերմափաների մօտ: Սոսկուա նմմերի, Թիֆլիս, Կվէէսի և ալլն:

մնում ճնշուած մինչև հացահատիկների հնձելը, որից յետոյ արտերը սկսում են կանաչել ցանած խոտով, իսկ հետեւեալ տարին հնձեռում են:

Մի անգամ ցանած խոտը հնձեռում է 1, 2, 3, 4 տարի շարունակ, նայած տեսակին: Երբուկը և քիւրուչնան հնձեռում են ամեն մէկ տարի և տարին մի անգամ: Երեքնուկը և ցորնախ. 2—3—4 տարի, տարին 1—2—3 անգ. եօնջան . . . 3—4 » » 2—4 »

Կովկասում տարածուած կարծիք է, որ խոտ կարելի է ցանել միմիայն ջրարբի տեղերում: Բայց դա չափազանցութիւն է: Ջրարբի տեղերը խոտերը ի հարկէ աւելի հունձ և բերք են տալիս, քան դեմք տեղերը. բայց եթէ մենք թողնենք տաք զաշտերը (ուր առանց ջրի ոչինչ չի բանում), պէտք է ընդունենք որ ջուրը միայն ցանկալի է և ոչ անհրաժեշտ Դա մանաւանդ ճշմարտութիւն է այն տեղերի համար, որոնք գանւում են 5—6000 և աւելի բարձր տեղերում:

Իբրև ապացոյց վերը ասածներին, ես կարող եմ բերել օրինակ և կովկասի կեանքից: Թիֆլիսի, Գօրու և Բօրչալուկի գաւառների սահմանագլխում, Մանգլիսի մօտ, Մօլիս գիւղում, գանւում է Ն. Կավրիեվի կալուածքը: Կալուածքը ունի 4500—6000 բարձրութիւն և բաղկացած է վարելահողից և արօտ ու խոտհարքներից, որոնք չեն կարող ջրուել: Պ. Կավրիեվը մի քանի տարի առաջ սկսեց պարապել կաթնատնտեսութեամբ և մեծ կարիք էր զգում խոտի: 1896-ից դիմելով խոտի ցանքսին, սկզբում նա փորձեց ցանել ցորնախոտ, երեքնում և եօնջա, բայց վերջը կանգ առաւ ցորնախոտի և երեքնուկի վրայ, և այս բովէիս նրա բնական խոտհարքներից և արօններից մօտ 35 գես: Կազմում են արհեստական խոտհարքները: Գործը այնքան յաջող է գնում, որ խոտացանքսով սկսել են պարապել նրա հաւասար գիւղացի թիւները:

Վերջի 5 տարուայ փորձերի հիման վրայ երիտասարդ գիւղատնտեսը ընդունում է որ բնական խոտհարքների 85 պուդ խոտի տեղ, արհեստական խոտհարքից նա ստանում է 190 պուդ, այսինքն երկու անգամ աւելի: Իսկ թէ ինչքան արհեստական խոտի ցանքսը ձեռնտու է, երեւում է հետեւեալ համեմատութիւնից: Մէկ գեսեալին խոտհարքի վրայ ծախսում է ոուրի:

Բնական Արհեստական  
խոտհարք: Խոտհարք:

Հողի վարձի արժէքը մօտ.	40	40
Սերմ $1\frac{1}{4}$ պ. = 7 ռ. (4 տարի)	00	125

Յանկլու և այլ մանր ծախքեր . . .	00	025
Հունձ . . . .	50	50
Ժողովել և բլուր կիտելք . . .	35	65
<b>ԲՆԴԳԱՄԻՆԸ ,</b>	<b>12<sub>50</sub></b>	<b>17<sub>0</sub></b>

Մի գեսետին տեղը եկամուտ տալիս է (խոտի պուղը հաշուելով 15 կոպ.)՝ բնական խոտհարքներից (85×15=) 12<sub>75</sub> ո. արհեստական » (190×15=) 28<sub>50</sub> » Զուտ արդիւնք ստացւում է՝ բնական խոտհարքից 0<sub>75</sub> ո. » » » արհեստական » 11<sub>50</sub> »

Այն ժամանակ, երբ խոտի պուղը նստում է՝

Բնական խոտհարքներից (12<sub>5</sub> : 85=) 14<sub>7</sub> կոպ.

Արհեստականից միմիայն (17<sub>0</sub> : 190=) 8<sub>9</sub> »

Ի՞նքն ըստ ինքեան հասկանալի է, որ պ. Կավրիելի գիւղը բացառութիւն չէ կազմում մեր լեռնային գիւղերի մէջ, Կովկասի հողագործութեամբ և անասնապահութեամբ պարապող գիւղերից չատ շատերը գտնվում են նոյն բարձրութեան վրայ (4—6500 հ. ալին), ունեն նոյն չափ խոնաւութիւն, ուսումնական նոյնչափ «եկ»-ով։ Ես կ'ասեմ աւելին, Կավրիելի խոտարքները հարթ չեն, հողը կաւալին է. այն ինչ միւս չատ տեղերում լեռնային հողը սև է, աւելի բերի և գիրքը աւելի հարթ (վարուղ), քան Մօխիսում։

Ալեքսանդրապոլի, Եոր-Բայազեթի, Զանգեազուրի, Կարսի և այլ չատ գաւառների լեռնային մասերը այնքան ցուրտ են, այնքան առատ են ուսումնական անձրևներով, որ արհեստական խոտհարքներ այդ տեղերում, առանց ջրի, հեշտութեամբ կարող են առաջ կալ։

Անհրաժեշտ է, ի հարկէ, ընտրել կարելիին չափ խոնաւ-հարթ լանջեր, մանաւանդ գէպի հիւսիս ընկած, այսինքն այն տեսակ տեղեր, ուր հացահատիկները ցրտի պատճառով զրժուաթեամբ են բռւսում, կամ անձրեային տարիները «խեղդւում» են խրբուկով և այլ որումներով, ամեն մի լեռնային գիւղում այդ տեսակ հողեր կան և խոտի ցանելը այդ տեղերում կարող է զգալի կերպով աւելացնել ժողովրդի եկա-մուտը։

Բայց այդ ինչպէս վերև ասացինք, խոտի ցանքը միջոց կը տայ մեր ժողովրդին մտցնել բերքի փոփոխութիւն (ՈԼՈՃԵՒ) և այդպիսով վերջ դնել հողերի յոդնածութեան, որ առաջ է եկնել միատեսակ մշակութիւնից հացահատիկների համար. աւելացնելով խոտը—բնականարար կ'աւելանայ անասուն-

ների թիւը, միջոց կը տրուի լաւացնել անասնապահութիւնը, լայնացնել կաթնատնտեսութիւնը։ Եատացնելով անասունների թիւը, մենք կը ստանանք աւելի ազք, աւելի տռատ կերպով կը պարարտացնենք վարելահողերը և նոյն տարածութեան հո-ղից բնականարար կը ստանանք ներկայից շատ եւ շատ աւե-լի բերք։

Մեր երկրի անասնապահութեան թոյլ կողմերից մէկն էլ նա է, որ անասունները կովկասում չեն բաժանուած որոշ ցեղերի, չունեն այն առանձնայատկութիւնները, որ պահան-ջում է ժամանակը։ Եւ իսկապէս։ Այն ժամանակ, երբ Անդրբ-կովկասը վերջին տասնեակ տարիների ընթացքում կրած է բաւականին մեծ փոփոխութիւններ և ընդհանուր կուլտուրա-կան, և արդիւնաբերական ու գիւղաբնասական միւս ճիւղերի մէջ—անասնապահութեան վերաբերմամբ նա շարունակում է մնալ համարեա նոյն նահապետական զրութեան մէջ, ինչ դրութեան մէջ էր 100 տարի առաջ։ Անցեալ գարումն էլ մենք ունեինք Ղարաբաղի նոյն գեղեցիկ նժոյգները, նոյն գիւղաց-կուն, չարքաշ պայմաններին սովոր տեղական ձիերը, որոնք հիմա էլ գնահատում և ձիարշաւներում մրցանակներ են ստա-նում։

Չը նայած կեանքի փոփոխութեան, չը նայած ճանապարհ-ների լաւանալուն, կառքերի առաջ գալուն, լծուող աւելի ու-ժեղ ձիերը մենք ստանում ենք... Ռուսաստանի խորքերից Բնական պայմանները շատ նպաստում են, որ Կովկասի կազմի ու հաճարի անտառների շրջանում լայնանայ խոզապահու-թիւնը, զարգանայ այն չափով, ինչ չափով պահանջում է մե-ծացած և որբացած շուկան։ Դժբախտաբար 1901 թուի ցուցա-հանդէսը պարզեց, որ մեզ մօտ չեն զարգանում ու տարած-ւում ոչ միայն բերքերի նման մաքուր և ձեռնտու ցեղեր, այլ և խառնուրդներ՝ տեղական ցեղի աւելի ազնուացածի հետ։

Այն ոչխարը, որ պահուում է այսօր Կովկասում մի, բըր-դի, կաթի համար—պահուում էր և 100 և 1000 տարի առաջ։ Թուշի ցեղը իր համեղ մսով, միջակ բրդով ու կաթով վրաս-տանում, հայ-թուրքական չրջանի Մազլիս իր խոշորութեամբ ու ճարպով, պղղաւոր ոչխարը իր բըրդով ու բաւարար կա-թով—բայց վատ մսով։ Իմերեթում—այս բոլոր ցեղերը կային և շատ առաջ։ Ձիշա է, Գանձակի նահանգի գուխօրօր զաղթա-կանները 30-ական թուականներին իրանց հետ բերած էին նուրբ բուրդ տուող մերինոսներ, բայց այդ ցեղը չի տարած-ւում, չնորհիւ չը կթուելուն և անհամ մսի։

Նոյն անշարժութեան մէջ են և մեր մեծատաւարի ցեղերը Յուցահանդէսի առթիւ կայացած ժողովների մէջ պ. պ. կանցէլմախերը, Ալ. Քալանթարը և ուրիշները մատնանիշ անելով այդ անշարժութեան վրայ, խոստովանւում էին մի և նոյն ժամանակ որ Կովկասի մեծատաւարի ցեղերը նոյն իսկ լաւ ուսումնասիրուած չեն: Մենք գիտենք ընդհանրապէս, որ Կովկասի մեծ շղթայի ու իր փոռուածքների վրայ արածում է մեծատաւարի աւելի մանր. Օսի, լսոնականների ցեղը (8—12 պուդ. քաշով), իսկ Անդրկովկասում աւելի խոշոր ցեղ (12—15 պ.)՝ Ղազախի, Քեւառի, Շորագեալի ցեղի անուան տակ: Զլդրի կամ Արդահանի տաւարը յայտնի է իրրև բաւարար մսացու ցեղ, իսկ դուխօրների մոխրագոյն կամ ոսի տաւարը իրրև ցեղ ամենից խոշորը: Յայտնի է, վերջապէս, որ սարի տաւարը միշտ աւելի մանր է քան դաշտինը, չոր շրջանինը աւելի չաղ, իսկ խոնակինը նիհար: Բայց... այս ամենը գեռ բաւական չէ: Մենք չունենք տեղեկութիւններ այդ ցեղերի կամ տեսակների առանձնայատկութիւնների մասին: Ուզեցած ժամանակ մենք չը գիտենք որդ զանենք լաւ մսացու, որտեղ լաւ լծկան, որտեղ լաւ կարեատու ցեղ: Մեր մեծատաւարի բոլոր յայտնի ցեղերը և կթելու համար են, և լծելու, և միս ստանալու, այսինքն ամեն բանի համար են ընդհանրապէս, բայց և ոչ մէկ բանի մասնաւորապէս: Այս գրութիւնը բաւարար էր 100, 50 տարի առաջ, երբ անասնապահութիւնը նատուրալ շրջանի մէջ էր, բայց հիմա չի համապատասխանում փոխուած պայմաններին: Վերջինս պահանջում է ճիւղերի բաժանում, որպէս զի անասունների մէջ զարգացած լինի մի յատկութիւն, բայց զարգացած զգալի չտփով: Ասածիս անհրաժեշտութիւնը լուսարանելու համար, բաւական է լիշեցնել, որ Եւրոպայի բնուակիր ճիւղերը ոչ միայն 2—3 անգամ ուժեղ են մեր ճիւղերից, այլ և գոմէշներից:

Խոզերը իրանց ծանրութեամբ և մեծութեամբ մեր 5—7—10 պուդանոց քաշից հասցրուած են մինչեւ 15—20 և նոյն իսկ 30 պուդի:

Մեծատաւարը Եւրոպայում քաշում է 40—50 պ. և աւելի, այս ինչ 20 պուդը մեզ մօտ հաշում է միջակից բարձր: Միջակ կովը մեզ մօտ տալիս է 30—40 պ. կաթը, այս ինչ Եւրոպայի կաթնատու կովը վատ է հաշում, եթէ տալիս է 100 պուդից պակաս, միջակ տարեկան կիթը այնտեղ 150 պ. է, իսկ լաւը՝ 200 պ. և աւելի: Եւ այսպէս ամեն ճիւղում:—Եւրոպայում ուշադրութիւն է զարձրած մի յատկութեան վրայ և այդ յատկութիւնը զարդացրուած կարելին չափու նոյն բանին ճիւղում է մենք Երկրի այս կամ անկիւնական կաթնեղէնների դերը ընդունում է չափ և չափերի կովմից: Դրանց գործածութիւնը տարէց տարի ստանում է աւելի և աւելի լայն ծաւալ: Հում, պատրաստի իւղի տեսակների մէջ կովկասում յայտնի են՝ կարագը և հալած իւղը, սերը, արածանը (հում սերը), թթուած սերը (սուսների սմետանան), զայմախը (կիսաչորացրած ու թթուեցրած սերը), չորացրած սերը (Աջարիայի և Փոքր-Ասիայի շրջաններում): Իւղ հարեւիս, մնացորդից բաժանում է չոր կամ թանը (այրանը), որից չորացնելով ստացում է չորաթան (զուռութ), որ տալիս է մեր աղքատ մողովրդին յայտնի թանապուրը:

Վորձերը դոյց են տալիս, որ լաւ մնունդի չնորհիւ Կովկասում ստացուած են և խոշոր, ուժեղ ճիւղ և ահագին մեծութեան խոզեր և կաթնատու կովեր ու լծկան եղներ, որոնք շատ քիչ են տարբերուած եւրոպական ազնուացրած ցեղերից: Եթէ բաւարար մնունդի հետ մեր հասկացող գիւղացիները հոգ տանէին և տեղական ցեղերի ազնուացման մասին, մենք կ'անէինք շօշափելի քայլ գէպի առաջ: Դրա համար հարկաւոր է գիլաւոր բայց Որոշելով առաջ: Որոշ յատկութիւն առաջ են եկած և բազմացնել գիլաւորապէս այդ, ցանկալի յատկութիւն ունեցող, ջոկովի անհատները... Այդ միջոցով զիլաւորապէս առաջ են եկած և եւրոպական ազնիւ ցեղերը:

Ճիշտ է, մենք ունենք օրինակներ՝ ինչ յաջողութեամբ մնում են Կովկասում և ճիւղերի, և խոզերի, և մեծատաւարի եւրոպական մի քանի տեսակները. շատ տեղեր յաջողութեամբ խամսում և մետիսներ են ստացուած տեղական և եւրոպական ցեղերի միացումից: Այնուամենայնիւ մի բան անհերքելի է, որ տեղական ազնուացրած ցեղը աւելի կը համապատասխանէ տեղական աշխարհազրական, կլիմայական և այլ (չատ անգամ անորոշելի) պայմաններին, քան օտար երկրում ու այլ պայմաններում ստեղծուած տեսակը: Թէ ինչքան մեծ դեր են խաղում տեղական պայմանները, գրան ապացոյց է և մեր երկրի կաթնատնտեսութեան այլ և այլ ճիւղերի գրութիւնը:

Դիմելով կաթնատնտեսութեան, չափազանցրած չեմ լինի, եթէ ասեմ, որ իր բազմակողմանիութեամբ կաթնատնտեսութեան վերաբերմամբ կովկասը բռնում է բազառիկ գիրք: Մածունը, կէֆիրը և որոշ չափով կումիսը տարածուած են Եւրոպայում ու Ամերիկայում կովկասից: Առողջապահական, մնացի, համեղութեան կովմից այս կաթնեղէնների դերը ընդունում է չափ և չափերի կովմից: Դրանց գործածութիւնը տարէց տարի ստանում է աւելի և աւելի լայն ծաւալ: Հում, պատրաստի իւղի տեսակների մէջ կովկասում յայտնի են՝ կարագը և հալած իւղը, սերը, արածանը (հում սերը), թթուած սերը (սուսների սմետանան), զայմախը (կիսաչորացրած ու թթուեցրած սերը), չորացրած սերը (Աջարիայի և Փոքր-Ասիայի շրջաններում): Իւղ հարեւիս, մնացորդից բաժանում է չոր կամ թանը (այրանը), որից չորացնելով ստացում է չորաթան (զուռութ), որ տալիս է մեր աղքատ մողովրդին յայտնի թանապուրը:

Վերջապէս, պանրի տեսակներից յայտնի են՝ օսի (կամ կորի), թուշի, թարաքեամի (Շիլուէի), Աջարիայի պանիրները,

ինչպէս և Դարալագեազի բղուզը, Ալեքսանդրապոլի «մըլած» պանիրը, անիւղ ջիլը և թել պանիրը, Մինզրելիալի սուլդունը \*):

Կաթնատնտեսութեան այս բազմակողմանի ճիւզերից դիմելով ստացուող մթերքների որակութեան, մենք սափուած ենք, դժբախտաբար մատնանիշ անել շատ բացասական կողմերի վրայ, ինչպէս մեր իւզերը, այնպէս և պանիրները արժեք չունեն երկու պատճառից՝ առաջին, որ կեղտու են, երկրորդ՝ չունեն որոշ, համեղ, գնահատուող յատկութիւն։ Իւզը մեզ մօտ ստանում են կամ արաժանից կամ մածնից, Արաժան ստանալու համար կաթը վրանների տակ «փռում» են տաշտերում 1—1½—2 օրուայ ընթացում և փռած կաթի երեսից հաւաքում արաժանը։ Արաժանից կամ մերած մածնից փայտէ մեծ կոթերում կամ կաշուէ պարկերում «հաւաքս» են անում 5—10—15 օր, նայած կովերի քանակութեան։ Երբ հաւաքսը համուռմ է մի քանի պուզի, ածում են կաւէ, փայտէ խնոցիների կամ կաշուէ պարկերի մէջ և հարում։ Մի քանի ժամից թանը բաժանւում է կարագից, որ պահում են վրան աղ անելով, մինչեւ հալել։ Ստացում է հին, խառը համ ունեցող մթերք։ Եթէ այս ամենի վրայ աւելացնենք և այն, որ փռուող կաթը լինում է մեծ մասմբ բաւականին աղտոտ, զանազան կենդանիներից վերցրած, մեղ հասկանալի կը դառնայ, թէ ինչու այս բոլոր ձանապարհները անցնելով կովկասի իւզը լինում է մեծ մասմբ անմաքուր, առանց նրբութեան և հետեապէս՝ առանց արժեքի, այն ինչ ամենափոք փոփոխութիւնը իւզ պատրաստելու մէջ կարող էր զգալի կերպով լաւացնել կարագի յատկութիւնը եւ բարձրարնել դիւզայու ստացած եկամուաը։

Դրա համար հարկաւոր է պայման սերը կաթից բաժանելու համար գործ ածել սեպարատորներ։

Լուզիդ Նօրմլի Փիրմայի պատրաւտած սեպարատորներից «Ալֆա Միլպուտը» բաժանում է ժամը 3½ վեղրո կաթը սերից և արժէ 50 ռ., Ալֆա կոլիբրին, որ բաժանում է ժամը 10 վեղրո, արժէ 75 ռ., Ալֆա բէրին (20 վեղրո ժամը) — 145 ռ. և այլն։

Բացի արագութիւնից և մաքրութիւնից սեպարատորները միջոց են տալիս աւելի մաքուր կերպով բաժանել սերը կաթից և հետեապէս ստանալ մինույն կովից աւելի մեծ քանակութեամբ կարագ։ Այն ծախսը, որ անելու է գիւղացին սեպարատորի վրայ, նա կը վերադարձնէ հէնց առաջին տարին՝ ստանալով միւս տարիները զգալի չափով զուտ արդիւնք։

\* ) А. Калантарь. Молочное хозяйство на Кавказе. Т. 1901.

Պանիր չինկիս, ճիշտ է, հաւաքս չի անւում, բայց տեղի են ունենում այլ բացասական կողմեր։ Պանիր ստանալու համար, ինչպէս յայտնի է, հարկաւոր է նոր կթած կամ քիչ տաքացրած կաթը մերկ որոշ բազազրաթեամբ «մերանով», որ արագում է կաթով մննդուող գաների ու հօրթերի շիրդունը (ստամոքսի ծագեր ունեցող մասը)։

Եւրոպայում և մեզ մօտ օսերը այդ լաւ հասկանում են և պանիր մերկու համար գործ են ածում միմիայն մանուկ կենդանիների շիրդունը իր մէջ գտնուած «մերանի» (մակարդուած պանիր) հետ։ Բայց մեր ժողովուրդը շիրդունի հետ միասին «մերանի» վրայ աւելացնում է և շատ աւելորդ բաներ՝ աղ, չիր, մնզր, քիչմի՛, ցորեն, քայախ, ձու, սոխ, ուրցը, հոն, և ուրիշ պտուզներ ու բայսեր։

Սրանդից ամնն մէկը եթէ չի էլ տալիս պանրին որոշ չափով իր համը, յամենայն դէպս ծածկում է խսկական մերանի ոյքը և գիւղացուն շատ անզամ պահում է մթութեան մէջ մերանի քանակութեան վերաբերմաբ։ Հետևանքը լինում է նա, որ պանիրը մակարդում է ոչ այնպէս յանկալի է։

Մակարդուելուց յետոյ պանիրը մղում և բաժանում են շիճուկից։ Օսերի հաչակուած պանիրը նախ բաժանուում է շիճուկից ձեռքով, հէնց այն ամանի մէջ, որ մերուած էր պանիրը։ Յետոյ պանիրը մղում են վերջնականացէս յատուկ կլոր փայտից շիճուած ամանների մէջ, որից յետոյ վրան աղ են անում, թողնում միւերկու օր և պահում աղաջրի մէջ։ Թոշերը մակարդուած պանիրը բաժանում են մի քանի կտորի, ածում զատ զատ պարկերի մէջ և քամում, ժողովելով պանիրը պարկի մի անկիւռում։ Լաւ քամուելու համար պանրի վրայ առաջի զիշերը դնում են ծանրութիւն (քարեր)։ Յետոյ պանիրի բլթի վրայ աղ են անում և դնում կաշուէ պարկի մէջ, որ ժամանակ առ ժամանակ չըւու են տալիս, որպէս զի աղաջուրը ամեն կողմից ազգէ պանիրի վրայ, Թարաքամանները քամած պանրի բլթի, նախ քան աղ անելը եփում են շիճուկի մէջ, կամ դնում արեի տակ, որպէս զի նա ստանայ դեղին գոյն, յետոյ կտրտում են և դնում աղաջրի մէջ։

Պանրագործութեան վերև լիշտուած օսի և թուշի ձեները վերջներս սկսուել են տարածուել կովկասում։ Մաշնելով կաթի ամելը մաղի և գործուածքի միջոցով (մաքրութեան համար) տալով պանիրի բլթիներին գունսի ձև, չորո՞հի յատուկ պատրաստուած չշանախներին), գործ ածելով շիրդունից ստացած լաւ մերան և մաքուր աղ՝ թիֆլիսի բախկանները բաւականին կատարելագործած են տեղական անքաշ պանիրը...

Այսուամենայնիւ ժողովրդի ստուար մեծամասնութիւնը, կովկասում անամսապահութեան և կաթնատնտեսութեան այլ և այլ ճիւզերի վերաբերմամբ, հետեւում է նահապետական ձեւերին և ստանում շատ չնշին եկամուտ:

Ի նկատի ունենալով մի քանի մասնագէտների կատարած հաշիւները \*) կարելի է ընդունել, որ ընդհանրապէս (առանց վերածելու անասուններին տեսակների) անասնապահութիւնից ստացուած եկամուտը միջակ տարին հաշուար է անասունների արժէքի կէսին, իսկ զուտ արդիւնքը—արժէքի  $1/5$ -ին. հաշուելով միջակ մեծատաւարի (1 կով, հորթ, եղի, 5 ոչխարի, ձիու, աւանակ) գինը 20 ռ., նրա տարեկան տուած եկամուտը կը մինի 10 ռ., իսկ զուտ արդիւնքը 4 ռուբրի: Վերը բերուած թուերի հիման վրայ մենք կարող ենք ընդունել, որ Անդրկովկասում միջակ անձի վրայ հաշուում է անասունները. 39 մեծատաւարի հաշուով, 2780 ռ. արժողութեամբ, որից ամեն անձ միջին թուով (կաթով, մսով, աշխատանքով) ստանում է 1390 ռ. տարեկան եկամուտ և 556 ռ. զուտ արդիւնք:

Գրականութեան մէջ անասնապահութիւնից ցոյց տուած եկամուտը այս թուերից քիչ պակաս է:

Երեանեան նահանդի միջակ ընտանիքների բիւզէններին նայած \*\*), օրինակ ամեն մէկ անձնաւորութեան ստացած ընդհանուր եկամուտի 397 ռուբլուց, անասնապահութեան ճիւզերից ստացուած եկամուտը հաւասար է 94 ռ.: Մի քանի տարի առաջ կատարուած հետազօտութիւնների հիման վրայ \*\*\*) եւ ընդունած եմ որ Երեանեան նահանգում և կարսի շրջանում միջակ անձնաւորութեան տարեկան ստացուածքի 3923 ռուբլուց 1184 ռուբլին ստացւում է անասնապահութիւնից: Այս թուերը քիչ ցած են վերը նշանակուած 1390 ռուբլուց, բայց դա բացատրում է նրանով որ վերջի թուի մէջ մտնում է և ձիերի ու եղների, այսինքն աշխատող անասունների տուած արդիւնքն ու օգուտը, այն ի՞նչ առաջի թուերում այդ եկամուտը ցոյց է արուած հողագործութիւնից ստացուած եկամուտի հետ...

Յենուելով վերը բերուած թուերի վրայ, մենք կարող ենք ընդունել, որ Անդրկովկասի անասունների ամբողջ քանակութիւնը 6,703 հազ. մեծատաւարի հաշուով և 134,052 հազ. ռ. արժողութեամբ՝ տարեկան բերում է մօտ 67,026 ռ. եկամուտ:

\*) „Կավказъ“ въ с. х. отношении въ 1899 г. Тифлисъ, 1900 г.

\*\*) Опытъ изслѣдованія с. хоз. Эрив. губ. и Карсской обл. Т. 1896 г.

\*\*\*) Ibid.

Մեծատաւարը պահելու համար արօաի և խոտհարքի հողի վարձի ծախս է լինում մօտ 5 ռ. ( $2-1/2$  ռ. ամառուայ և ձմեռուայ արօտի և  $3-3^{1/2}$ ,  $1/2$  դեսետին խոտհարքի վարձ), իսկ ընդագմանը 335 միլ. ռ. (695 ռ. անձի վրայ): Դուրս գալով այդ գումարը անասնապահութեան ընդհանուր եկամուտից, մենք կը ստանանք 335 միլ. ռ. (7. ռ. անձի վրայ) զուտ անասնապահութիւնից ստացած եկամուտ (առանց հողի), որից անասունների արժէքի  $20\%$  կամ 268 միլ. ռ. (556 ռ. անձի վրայ) կապիտալի տոկոսն է, իսկ մնացած 67 միլ. ռ. (144 ռ. անձի վրայ) աշխատանքի վարձ:

Անասնապահութիւնից ստացուած այս ամբողջ եկամուտը ստացւում է զանազան ճիւզերից՝ և մսից, և կաթնեղէնից, և կաշուուից, և կենդանի ուժով աշխատանքների համար: Որոշել ճշտուքն անասունների տուած այս բարիքների քանակութիւնը և արժէքը, դժուար է. այնուամենայնիւ այդ եկամուտը ընդհանուր առմամբ բաղկացած է հետեւեալ մասներից.

1) Մեծատաւարի մօտ  $1/3$  մասից—թուով 1254 հազ. պուդ 25,080 հ. ռ. արժողութեամբ ստացւում է զիստաորապէս ֆիզիկական ոյժ հողագործական աշխատանքների համար: Այդ աշխատանքի արժէքը հաշուելու է հաւասար մօտ 12,540 հ. ռ., ( $26$  ռ. անձի վրայ): Կովերից ու մատակներից (թուով անասունների  $1/3$  մասի, կամ 1,254 հ. ռ. արժողութեամբ) ստացւում է միջին թուով 30-ական պուդ կաթը, որից շինուում է՝

ա) 1-կան պ. իւդ. 10 ռ. արժողութեամբ,  
կամ ընդամենը 1,254 հ. պ. արժութեամբ . . . . . 12,540 հ. ռ. (26 ռ.)

բ) 2-կան պ. քաշած կամ ճիլ պանիր,  
 $1^{1/2}$  ռուբլով պուդը, կամ ընդամենը 2,508 հ. պ., արժողութեամբ 3,762 հ. ռ. (08 ռ.)

գ) 105-կան պուդ կամ  $1/4$  պուդ կաթ,  
մածուն, խիժ և այլն, 40 կ. պուդը  
արժողութեամբ, կամ ընդամենը 6,270 հ. պ., արժողութեամբ . . . 2,508 հ. ռ. (050 ռ)

Բացի այդ, մեծատաւարի (մնացած  $1/3$  կամ 1,254 հազարի) մօտ կէսը կամ ամբողջ տաւարի  $1/6$  մասը (627 հազ. հատ, արժողութեամբ մօտ 12,540 հ. ռ.) գործ է ածւում իբրև մնացու և տալիս է.

ա) միս  $627 \times 6 =$ ) 3,762 հ. պուդ, արժութեամբ ( $2^{1/2}$  ռուբլով) . . . 9,405 հ. ռ. (195 ռ.)

բ) կաշի (627 հազ., հատը 4 ռուբլով) . . . 2,508 հ. ռ. (050 ռ.)

- 2) Մանրատաւարից ստացւում է:
- ա) բուրդ, 4-կան փունտ (11 միլ. × 4 =)
- 11 միլ. պուդ, հաշուելով պուդը 6 ռ.,  
արժողութեամբ . . . . . 6,600 հ. ռ. (14 ռ.)
- բ) պանիր 55 միլ. կթան ոչխար-այծից  
1/2-կան պուդ, 275 միլ. պուդ, 3 ռ.  
պուդը, արժողութեամբ . . . . . 8,250 հ. ռ. (17 ռ.)
- գ) միս 1/4 մասից կամ 2,750 հ., 3-կան  
ռ. համը . . . . . 8,250 հ. ռ. (17 ռ.)
- դ) մորթի 2,750 հազ. հատ 40 կոպէկով 1,100 հ. ռ. (028 ռ.)
- 3) Խոզից ստացւում է զիխաւորապէս միս, ճարպ և մասամբ ճաղար (լոշտ մազ ստի): Ընդունելով, որ ամեն տարի մորթւում է կենդանի խոզերի (386 հազարի) 1/3 մասը (129 հազ.) հատը 8 ռուբի, արժողութեամբ 1,032 հ. ռ. (02 ռ.):
- 4) Զի, ջորի, աւանակներից (627 հազ.) խոչպէս և ուղտերից (48 հ.) 727 հազ. մեծատաւարի հաշուով և 14,460 հ. ռ. արժողութեամբ, ստացւում է զիխաւորապէս աշխատանք, բայց և մի քիչ միս ու բուրդ: Ընդունելով որ այդ եկամուտը կազմում է անտառների արժէքի մօտ 1/2, մենք կ'ունենանք որ այդ կարգի անտառների եկամուտը կազմում է 7230 հ. ռ. (15 ռ.)
- Ամբովելով վերը ասածները, մենք կը ստանաք, որ կովկասում միջակ տարին անտառապահութիւնից ստացւում է եկամուտ.

Ընդամենը	Մի անձի վրայ ռուբիի	Դիմական	Երկրի
հնչ բարիքներով.	հազ. ռ.	ազգաբնա-	ամբողջ
Կաթնեղիններով	27,060	564	492
Մսով	18,687	390	340
Բրդով և մազով	6,600	138	120
Կաշուով	3,608	075	065
Աշխատանքով	19,770	418	360
Ընդամենը	75,725	1580	1377

Չը հաշուած անտառներից ստացուած աշխատանքի արժէքը, անտառապահութեան բոլոր ճիւղերի եկամուտը կը հասնի ընդամենը 56 միլ. ռ.

Գիշական ազգաբնակութեան միջակ անդամի . 1167 ռ.  
Ամբողջ երկրի » » » . 1017 »

Այս թուերի իմաստը զնահատելու համար անհրաժեշտ է համեմատել դրանց միւս երկրների թուերի հետ: Դժբախտաբար դա միայն մօտաւորապէս կարող ենք անել, որովհետեւ անտառապահութեան մթերքների գները զանազան երկրներում

զգալի չափով միմեանցից տարբերում են: Ամերիկայի Միացեալ-Նահանգներում, օրինակ<sup>\*)</sup> կողի գինը հաշուում է 585 ռ., մնացած՝ մեծատաւարի 408 ռ., Գերմանիա մօտ—100 ռ. մեծատաւարը. այդ գների համեմատ մենք կ'ունենանք որ միջակ անձնաւորութեան վրայ բոլոր անտառների արժէքը Աւստրիա, Գերմանիա, Ֆրանսիա, Միացեալ-Նահանգներում հաւասար է 58, 58, 54 և 52 ռ.:

Եթէ անտառների եկամուտը կովկասի համեմատ ընդունենք հաւասար անտառների արժէքի կշռին, յիշեալ երկրներում ամեն անձնաւորութեան վրայ անտառապահութիւնից ստացած եկամուտը կը լինի մօտ 29, 29, 27 և 26 ռուբի կամ 3 անգամ կովկասից աւելի:

Ս.ելի ճիշտ տեղեկութիւններ կան կաթնատնտեսութիւնից ստացուած եկամուտի մասին: Կովկասում, ինչպէս վերևում տեսանք, կողից ստացւում է 30 պ. կաթը, իսկ մի անձի վրայ 138 պուդ. կամ 11 վեցքո, և որ կաթնատնտեսութեան տուածամբողջ եկամուտը համարում է 492 ռուբլու:

Իսկ միւս երկրներում պ. Ռադցիզի հաշուով

Միջակ անձնաւորութեան վրայ ստացւում է կաթը.

Դանիա, Շվեդիա, Շվեյցարիա . . . 675, 438, 381 վեցքո.

Հոլլանդիա, Միաց.-Նահ., Գերմանիա 326, 302, 293 »

Ֆրանսիա, Անգլիա, Աւստրօ-Ռւնդ. 170, 146, 185 »

Ֆինլանդիա, Լեհաստան, Եւրոպ. Ռուս. 488, 150, 73 »

Հնդկաստան, Իտալիա . . . 139, 90, »

Այս թուերի համեմատ հաշուում է և զանազան երկրների կաթնատնտեսութիւնից ստացուած եկամուտը մի անձնաւորութեան վրայ, նոյն բաղցիկի հաշուով հաւասար է:

Դանիա, Շվեդիա, Շվեյցարիա . . . 405, 263, 229 ռ.

Հոլլանդիա, Գերմանիա, Միաց.-Նահ. 195, 176, 151 »

Ֆրանսիա, Անգլիա, Աւստրօ-Ռւնդարիա 117, 100, 93 »

Ֆինլանդիա, Լեհաստան, Եւրոպ. Ռուս. 244, 75, 30 »

Հնդկաստան, Իտալիա . . . . 56, 36 »

Թուերը ակների կերպով պարզում են՝ ինչքան մենք յետ մնացած միւս ազգերից, և ինչքան դեռ աշխատելու ենք անտառապահութեան մթերքներին մօտենալու համար:

Անասնապահութիւնից և կաթնատնտեսութիւնից ստացած եկամուտը բարձրացնելու միջոցները.—Կրթական հիմնարկութիւնները.—Կաթի արտահանութիւնը դէպի քաղաքները.—Խղագործութեան և պանրագործութեան կատարելագործած ձեւերը.—Կապիտալիստական ձեւի բացասական կողմերը.—Հնկերութիւնների և համայնական ձեռնարկութիւնների գերը տեխնիկայի և առևտի զարգացման վերաբերմամբ.—Սիրիբիայի, Ամերիկայի և Դանիայի օրինակները.

## Գլ. III.

Անասնապահութիւնից և կաթնատնտեսութիւնից ստացած եկամուտը բարձրացնելու միջոցները.—Կրթական հիմնարկութիւնները.—Կաթի արտահանութիւնը դէպի քաղաքները.—Խղագործութեան և պանրագործութեան կատարելագործած ձեւերը.—Կապիտալիստական ձեւի բացասական կողմերը.—Հնկերութիւնների և համայնական ձեռնարկութիւնների գերը տեխնիկայի և առևտի զարգացման վերաբերմամբ.—Սիրիբիայի, Ամերիկայի և Դանիայի օրինակները

Հոկտնամբեր ամսում թիվիսում կայացած կովկասի անասնապահների և կաթնատնտեսների ժողովների նպատակներից մէկն էլ այդ խնդրի պարզելն էր, այսինքն ինչ միջոցներով կարելի է բարձրացնել ներկայումս անասնապահական ձիւղերից ստացած համեմատաբար չնշն եկամուտը։ Թողնելով մի կողմ այդ ժողովներում խօսուածների մանրամասնութիւնները, առաջարկուած բոլոր միջոցները կարելի է բաժանել երկու հարգի՝ 1) ինչ միջոցներով տարածել տեխնիկական գիտութիւններ և 2) ինչ միջոցով բաց անել աւելի լայն շուկայ անասնապահութեան այլ և այլ մթերքների համար և դրանով բարձրացնել ստացուող մթերքների գները։

Առաջի հարցի մասին ես երկար չեմ խօսիր, ի՞նքն ըստ ինքեան պարզ է, որ կաթնատնտեսութեան և անասնապահութեան շահների պաշտպանութեան համար ժողովի կողմից ընտրուած յատուկ մարմնի կաղմակերպելը, շրջող մասնագետ-վարպետների նշանակելը՝ զանազան տեխնիկական նորմուծութիւններ տարածելու համար, ինչպէս և ալպեան (լեռնային) փորձնական-գիտական կայարանի բաց անելը Անդրկովկասի որ և է անասնապահական վայրում—շատ ցանկալի կը լինէր։

Բայց, առանալու չէ և նա, որ այդ հիմնարկութիւնները ով գիտէ դեռ երբ բացուեն, չինովնիկական ձեռնարկութիւնները միշտ ունեն իրանդ խոշոր թերութիւնները, որոնցից զուրկ չեն լինի և վերը նշանակուածները. միւս կողմից, անհերթէ է, որ մինչեւ օրս կատարուած փափոխութիւնները կաթնատնտեսութեան մէջ առաջ են եկած չորհիւ շուկայի պահանջի և մասնաւոր մարդկանց նախաձեռնութեան։

Անկասկած, այդ նախաձեռնութիւնը շուկայի լայնանալու հետ միասին կը խաղայ մեծ գեր և ապագայում։ Խնդիրը, ուշքեմն, դալիս է նրան, թէ ինչ ձեռնարկութիւն և անամնապահական ձիւղ այս բուքէիս ամենաձեռնութեան և ամենաշահաւէտն է Անդրկովկասում։

Կաթի վաճառումը այդ տեսակէտից արժանի է լուրջ ուշադրութեան։

Թիֆլիսում (ինչպէս և միւս քաղաքներում) կաթի պուղը ծախուում է 2—1½—և ամենացածր 120 սուրբով։

Նոյն կաթը կովկասի զանազան անկիւններում գնահատուում է 40—60 կուգ։ Անկասկած, այն բոլոր արօս և խոտհարք ունեցող լեռնային գիւղերը, որոնք 5—15 վերսար վրայ են, երկաթուղիներից, լաւ շահ կարող են ստանալ, եթէ զբաղուէին կաթի արտահանութեամբ գէպի քաղաքները։

Փոխադրութիւնը այդ գէպօրում (հաշուելով և յատուկ մետաղեայ ամանները, և սառուցի պահելը, և երկաթուղու ծախուղերը, և կորուստը) կը նատէր բաւականին արժան և ամեն մի պուդ կաթը կը տար զրանով զբաղուողին 20—30 կուգէկ ներկայիցս աւել։

Նամանաւանդ ասածիս իրագործուելը հեշտանում է նրանով, որ երկաթուղու վարչութիւնը կաթնեղէն և մրգեղէն վուխադրելու համար իր զնացքների մէջ մացրած է յատուկ վազօններ, որոնք ձմեռը տաքացւում են իմկամառը սաղցւում։ Բացի այդ, շատ փչանող մթերքները երկաթուղին տանում է մարդատար զնացքների հետ, փոխադրութեան վարձը վերցնելով ապրանքատար գուցքի հաշուավ։

Ուշադրութեան արժանի է այս հարցի վերաբերմամբ և նա, որ այս գէպօրում կաթ արտահանող գիւղերին և մասնաւոր անձանց աւելի ձեռնուու կը լինի պահել շատ կաթ տուող, թէ կուղ աւելի մեծ արժէք ունեցող կովեր։ Ակագիմիկոս Միւրդենչորֆ<sup>\*)</sup> հաշուած է որ 1000 ֆունտ (25 պուդ.) քաշ ունեցող

\*) Բուլանի, Справочная книга русского сельского хозяина,

լաւ կովկ տալիս է մինչև 5000 ֆ. կաթ, սպառելով օրական 30-ական ֆ. ամենալաւ խոտ, կամ տարին 10,950 ֆ.:

Մի Փունտ կաթ արտադրելու համար այս տեսակ կովը  
սպառում է ուրեմն 2 ֆ. խոտ: Այն ինչ փորձերը ցոյց են  
տուած, որ ամենալաւ կովերը 1 ֆ. կաթ տալու համար  
ուտում են միայն  $1\frac{1}{2}$  ֆ. խոտ, իսկ վատ կովերը—մինչև 4  
Փունտ: Վախենալ, որ քաղաքները մնած քանակութեամբ կաթ-  
բերելով, կաթի գինը կ'ընկնի և այդ ճիւղը անձնունտու կը դառ-  
նայ—սխալ է:

Թիֆլիս քաղաքի քիմիական լաբորատորիայի քննութիւններից երեսում է, որ ծախուզգ կաթի մեծ մասը խարդախուած է զանազան անվեսա և վասակար նիւթերով (ալիւր, կաւիճ, ջուր, սալիցիլի և այլն). Թէ ինչ աստիճանի է համեսում կաթի կեղծելը Թիֆլիսում—մենք ճշորէն չը զիտենք, բայց Մոսկուայում պրօֆ. Էրիստանի<sup>\*)</sup> հաշուով իւզի քանակութիւնը, իսկական կաթի 416 % -ի տեղը, շնորհայում իջնում էր պատճեն 377 % -ի, ուտիսին 256 % -ի, մասր խանութներում 245 % -ի, Խիարօվի հրապարակում 064 % -ի, և այլն:

Ահա ինչու, երբ մի ոմն Զիշկին կաթի առևտուրը Մոսկ-  
տայում զբեց լայն, բայց աղնիւ հողի վրայ, կաթի զինք այս-  
տեղ չիջաւ, իսկ սպառումը մի քանի տարում աւելացաւ. եր-  
կու անգամ: Նոյն է և Կովլիասի քաղաքներում: Վախենալով  
կեղծիքից շատերը կամ չեն գործածում կաթը, կամ գործ են  
ածում շատ փոքր չափով. հենց որ համոզմունք կայացաւ որ  
այս կամ այն զիւղերը, ընկերութիւնները, փիրմաները ծախում  
են անարատ կաթ—կաթի պահանջը կը բարձրանայ սուանց  
ազդեցու գների վրայ, կամ նոյն իսկ բարձրացնելով վերջին-  
ներս...

Սրան կը նպաստէ և այն հանդամանքը, որ կաթի կեղծելու գէմ կռօւելու համար ներկայումս մշակւում են յատուկ պաշտօնական միջոցներ։

Առայժմ ես չեմ ուղարկ խօսել նրա մասին, որ երկաթուղուց հեռու վայրերը կարող են կաթը արտահանել կամ համարկելով նրան պատճերի գաղաքայի (մինչև  $60^{\circ}$  տաքացնելու), կամ թանձրացնելով (մինչև  $1/4$ ) և յատուկ կողովներում փակելով:

Երկրորդ ճիւղը, որ մեծ ապագայ է խոստանում կովկասում—դա չվեցարական և եւրոպական այլ պանիրների պատրաստելն է։ Թէ մենք չունենք մանրամասն հետազոտութիւն-

Ներ կովկասի՛ կովի՛ կաթի՝ յատկութիւնների՝ մասին, բայց մի  
բան արդէն պարզուած է, որ մեր կովերի կաթը ընդհանրա-  
պէս աւելի խնոտ է, աւելի իւղ է պարունակում, քան եւրո-  
պական կովերի կաթը:

Եւրոպայում՝ կաթը պարունակում է	. . . . .	36%	իւզ.
Եւրոպ. Ռուսաստանում՝	. . . . .	42	»
Սիբիրիայում (ամառ և ձմեռ)	. . . . .	5—6	»
Կովկասում՝	»	4—6	»

Բացի այդ, չնորհիւ երեխ լեռնային ընտիր արօաների, մեր Կովկասից ստացւում է այն տեսակ ընտիր պանիր, որ անկարելի է լինում ստանալ Եւրոպական Ռուսաստանում։ Սյս պատճառով Կովկասի պանիրները Ռուսաստանի շուկայում միշտ 1—2 ռուբրով աւելի են գնածատում Ռուսաստանի պանիրներից և տարեց տարի աւելի ու աւելի լայն ասպարէզ են բացում իրանց սպառման համար։

Թէ ինչքան շահաւելտ է պանրագործութիւնը և բրոպական ձեռվ, կարելի է եղրակացնել նրանից, որ կոմի անքաշչքաշուած և ոչխարի անքաշ պանիբները տեղական ձեռվ պատրաստուած ժամանակ ծախւում են պուդը 3—4,  $1\frac{1}{2}$ —3 և 4—5 ոուրլուզ, այն ինչ նոյն քանակութեամբ կոմից, նոյն քանակութեամբ ստացուած միայն երրոպական ձեռվ պատրաստուած պանիբները (չվեցարական, ճողանդական, բօկֆոր) արժեն 2—12, 6—8 և 15—20 ոուրլի. այսինքն, երրոպական ձեռվ պատրաստուած մթերքները երեք անդամ աւելի են զնահատուում, քան տեղական ձեռվ պատրաստուածները: Դա էր պատճառը, որ գիւղատնտեսական ճիւղերից և ոչ մէկը չի կրել Կովկասուած (թէն շատ նեղ շրջանում) այն փոփոխութիւնը, որ կրել է պանրագործութիւնը և իրդ պատրաստելը երրոպական ձեռվ:

Պանիր և լւղ եւրոպական ձեռվ պատրաստելու համար առաջի գործարանը շինած է Կովկասում բարօն Ալ. Ֆ. Կուչեն-քախը 1863 թուին: Կուչենքախի օրինակով միւս տարին բացուած է և Ալեքսանդրեսկիլֆ գերմանական կօրոնիայի համայնական գործարանը. 80-ական թուականներից, երբ Կովկասի պանիրները սկսուեցին արտահանուել Ռուսաստան, եւրոպական ձեռվ պատրաստուած պանիրի գործարանները, կամ ինչպէս առում են ժողովրդի մէջ, զափօդները, ստացան մի առանձին զարկ: 1899 թուին \*) պանիրի գործարանների թիւը Սնդրեկով կասում համուռմ էր 15-ի, իսկ պատրաստած պանիրի քանակու-

<sup>\*)</sup> Молоко (Энциклопедич. словарь Эфрана).

թիւնը—13500 պուդի։ Հիմա (1901) գործարանների թիւնը համառում է 28-ի, որոնք պատրաստում են ոչ պակաս 18,000 պաշտցարական պանիր։

Ամեն մի նոր գործարան և վերջի երկու տարուայ ընթացքում պատրաստուած պանիրի քանակութիւնը աւելացած է  $^{1/3}$ -ով (38%)։

Պանիրի գործարանները կենտրոնացած են Թիֆլիսի նահանգի Տօրչալուի գաւառի Ըստնային մասում (Բաշեչիթ և Լոռի), թէ մի գործարան կայ Կարսի շրջանում և մի ուրիշը Գանձակի նահանգում։ Գործարանների մեծ մասը պատկանում են շվեյցարացիներին (Բերնի կանոնից), որոնք սկզբում եկած են Կովկաս իրեն վարպետներ այս կամ այն արդէն գոյութիւն ունեցող գործարանը։

Վերջերս կատարելազործուած պանրագործութեամբ սկսել են պարապել և տեղացի հայերը, ուստաները, թուրքերը, վրացիք։ Գործարանների մեծ մասը գտնուում են (12—24 տարով) կապալով վերցրուած աղնուականների հողերի վրայ—մի հանգամանք, որ խոշոր արգելք է հանդիսանում հողը հիմնականունքն լաւացնելու համար (ջրելու, քարից մաքրելու, պարարտացնելու)։

Գործարանները օգտուում են սեփական և վարձով վերցնող կովերի կաթով։ Հին, աւելի հարուստ գործարանները ապահովուած են իրանց սեփական կովերով, նորերը կովերի  $\frac{3}{4}$ — $\frac{1}{2}$ -ը վերցնում են վարձով զանազան տեղերից։ 8, 10, 15, 18 ուրբով 4—5 ամիս պանրագործութեան շրջանի ընթացքում։

Բոլոր գործարանները ձգտում են ունենալ կարելիին չափ կաթնառու կովեր, Դրա համար նրանք բերում են կովեր Ռուսաստանից (Նրիմի գերմանական կոլօնիաներից), բայց աւելի յաճախ գերադասում են խառնուրդով աղնուացնել տեղական ցեղերը եւրոպական ազնիւ ծագում ունեցող ցուլերի միջոցով։ 40 տարուայ ընթացքում պ. Կուչենբախին տեղական ցեղի և շինուի խառնուրդից յաջողած է ստեղծել յատուկ կաթնառու ցեղ, որ իր խոշորութեամբ և կաթի առաջարկեամբ շի եւրոպական կաթնառու ցեղերից։ Կուչենբախից վերցրուած հորթերը, մողիները, ցուլերը աղնուացնում են և միւս գործարանների անասունների ցեղը։

Այն ժամանակ երբ կովկասի գիւղերում միջակ կովի առած կաթի քանակութիւնը կարելի է ընդունել 20 պուդ, պանիրի գործարաններում միջակ կովը տալիս է մոտ 52 պուդ, իսկ

Կուչենբախի Ընտիր կովերով գործարանում 100 պուդից ոչ պակաս։

Բոլոր գործարաններում կաթի առաջ ժամանակ 4— $4\frac{1}{2}$  ամիս (մայիս—սեպտեմբեր) պատրաստում են պանիր, իսկ մնացած ժամանակ՝ կարագ իւղ։ Կարագ պատրաստելու համար ամեն տեղ զործ են ածում սեպտեմբերին և ամեն օր թարմ կաթից ստանում թարմ և քաղցր իւղ, որ մինչև քաղցր ուղարկելը (շաբաթը 1, 2 անգամ) պահում են սանանոցներում։ Պանիրը պատրաստում է կովի անքաշ թարմ կաթից։ Շվեյցարական (էմմենտալ անուանեալ) պանիր ձևով թարմ կաթը, 30—60 պուդ քանակութեամբ, մեծ ողնձէ կաթսայում մնալով տաքացնում են և մերում մաքուր շիրօնի մերանով (Եւրոպայից ստացուած): 1— $1\frac{1}{2}$  ժամից մակարդուած պանիրը մանր-մանր կարտում են յատուկ գործիքներով, տպացնում մօտ 20—30 րոպէ մինչև 60—70<sup>0</sup>, հանում կաթսայից (միանգամից) յատուկ գործուածքով, դնում կլոր զալիբի մէջ և քամում։ Կաւ քամուելու համար պանիր զլուխը մի քանի անգամ շուռ են տալիս և 1—2 օրուայ ընթացքում դնում ծանրութեան (յատուկ պրեսսի) տակ։

Երբ պանիրի զլուխը բաւականաչափ մզւում և ամրանում է, նրա վրայ աղ են մնում և տանում առաջի տաք պահեստը. պահեստում վառարան է վառում կամ կրակ անում, որպէս զի տպարութիւնը լինի 20—75<sup>0</sup> C.: Պանիրը մնում է այգտեղ մի քանի շաբաթ, ամեն օր 2 անգամ աղուում դրսից և ենթարկում առաջի բուռն ռեվին։ Տաք պահեստից պանիրը փոխազրում են ցուրտ պահեստը, ուր նա մնում է մի քանի ամիս և նոյն իսկ տարիներ։ Ենթարկուելով երկրորդ անկատելի ռեվին, սկզբում աղում և սրբում են պանիրը ամեն օր, յետոյ աւելի ուշ-ուշ, շաբաթը, երկու շաբաթը մի անգամ. 10 $\frac{1}{2}$  պուդ կովի կաթից ստացում է 1 պուդ պանիր, որ հէնց առաջի աշնանը ծախուում է 9—13 ուրբով։

Շվեյցարական պանիրի վերն բերուած պատրաստութիւնը Ընդհանուր առմամբ նման է տեղական պանիրների պատրաստութեան։ Զը նայած դրան, շվեյցարական պանիրը պահանջում է այնքան մաքրութիւն, այնքան նրբութիւն մանրամասնութիւնների մէջ, որ առանց հմուտ վարպետի նա փշանում է։ Ահա ինչու բոլոր գործարաններում կան յատուկ վարպետներ, որոնք եփում և աղում են պանիրը, վարպետների մեծ մասը կովկասում (ինչպէս և շատ ուրիշ տեղեր) շվեյցարացիք են, որոնք մասամբ կարծես ժառանգարար են իւրացրել այդ արհեստը։ Տարիների գործառութեան շնորհիւ կովկասի գործա-

բաններից մի քանիսում կան և տեղացի վարպետներ (թուրք, ռուս, վրացի): Յամենայն դէպս, նոր գործարանների համար անհրաժեշտ պիտի համարել հմտւա վարպետի ներկայութիւնը: Վարպետին տուած առձիկը (600—1000 ռ.), կրկնակի կը վարձարուի նրա տուած օգտով: Որ պանրագործութիւնը կատարելագործուած ձեռվ, չընայած իր մի քանի աւելորդ ծախսերի, ձեռնուու է կովկասում, երեսում է պ. Նիդիգէրի գործարանի հաշուից, որը ևս աւելորդ չեմ համարում այստեղ բնրել:

80-ական թուականներին պ. Նիդիգէրը ծառայում էր իրեւ վարպետ կուչենբախի մօտ 350 ռ. ունձիկով: Տեսնելով ինչքան այդ ճիւղը արդիւնաւէտ է, 1884-ից նա սկսեց իր սեռ վական գործը և հիմա կարող է համարուել ապահով, նոյն իսկ հարսւատ մարդ: 1899—1900 թուականներին նա վարձում էր 1500 դ. հազ (արօտ և խոտհարք, վճարելով 2500 ռ.), կթում էր 250 և 320 կով, ունէր բացի այդ մօտ 150 սուրբահ անառուն, մօտ 10 ձի, 15 խոզ (տան համար) սեփական շինութիւնների հետ միասին:

Նրա սեփականութեան արժեքի չափը համնում էր.

1) Շինութիւնների (ապրելու տուն, կաթնատուն, ախոս 400 ապր. համար)	.	.	.	.	20,000 ռ.
2) Անասուններ (320 կով 40 սուրբահ, 150 սուրբահ 25 ռ., ձիեր	.	.	.	.	17,250 »
3) Կաթսա և այլ գործիքներ	.	.	.	.	1,000 »

Ընդամենը . . . 38,250 »

Նիդիգէրի տարեկան եկամուտը և ծախքերը կազմում էին եկամուտ.

Պանիր 710—1000 պ., 11—12 սուրբահ պուղը—7,810—12,000 ռ.

Իւղ 200—150 » 17 » » 3,400—2,550 »

Աւելացած, ծախսուած, մորթուած անասուններ 3,000—2,450 »

Ընդամենը 14,200—17,000 »

Միջին թուով 156 հազ. սուրբի:

Ծախելու.

Հողավարձ . . . . . 2,500 ռ.

Վարպետին և մշտական բանուորներին . . . 1,200 »

Հովիտներին (20 հոգի, 100-ական ռ.) . . . 2,000 »

Կով կթողներին (ամառը 35 կին, ձմեռը 15) . . . 400 »

Խոսի պատրաստութեան ծախս—մշակներին,

նրանց մնունը . . . . . 5,600 »

Վառելիք և այլ մանր ծախքեր . . . . . 300 »

Ընդամենը . . . . . 12,000 »

Զուտ արդիւնք ստացւում է 3600 սուրբի, որ կազմում է կապիտալի մօտ 10%:

Եթէ ասածիս վրայ աւելացնել և այն որ մի քանի գործարաններ սկսել են իրանց խոտհարքները ջրել, աղբել, քարից մաքրել, լաւացրել ևս պանրագործութիւնն աւելինիկան,—անկարելի կը լինի ուրանալ, որ չվեցցարական պանրագործութիւնը ունի ահազին նշանակութիւն երկրի համար: Բայց ամենավեառութ ի հարկէ անսանապահութիւնից ստացուած եկամուտի աւելանալն է:

Կատարելագործուած պանրի ու իւղի պատրաստելը պանրի գինը բարձրացնում է 2—4 սուրբուց մինչեւ 10—12, իւղինը 8—10-ից մինչեւ 13—18, իսկ միջակ կովի առած եկամուտը 15—20-ից մինչեւ 35—40 սուրբին:

Զարմանալի չէ, որ այս պայմաններում չվեցցարացի հասարակ պանրագործներն ու չօրանները 10—20 տարուայ ընթացքում գիգում են տամնեակ հազարներ:

Դժբախտաբար պանրի ու իւղի պատրաստելը կատարելագործուած ձևով ու խոչըր ծաւալով ներկայ պայմաններում ունի և իր բացառական կողմերը: Լինելով այն տեսակ ճիւղ, որ տալիս է խոշոր եկամուտ, բայց որի մասին տեղացի ազգայնակութիւնը չունի զաղափար—չվեցցարական պանրագործութիւնը հանդիսանում է նոր միջոց հարուստների ու զիտունների ձեռքին կեղեցելու ու ճնշելու համար տղէտ և աղքատ ժողովուրդը: Առաջարկելով հոգատէրերին աւելի ձեռնառ պայմաններ, «զափուչիկները» հեռացնում են հողից զիւղացի ազգաբնակութիւնը, յորինի ու զարու արտերի տեղ բուացնում են խոսա: Համնում են այն հետեանքին, որ միենոն տարածութեան վրայ ասլում է աւելի քիչ մարդ, թէև աւելի շատ կով: Վերը յիշուած Նիդիգէրի գործարանի տեղը 80-ական թուականներին գտնուում էր Փաքր-Ղամարլու զիւղը, որի մէջ ապրում էին 24 ընտանիք թուրքեր (մօտ 100—120 հոգուց բարեկացած): Այդ ընտանիքներից ամնն մէկը պահում էր տաւար, ունէր լծկան, զիւղի ոչսարի հօտը համնում էր մի քանի հարիւրի, ամնն ընտանիք վարում էր ազատ, ապահով կեանք, անսանապահութեան հետ միասին անելով և մի քանի օրավար ցանքու երբ Նիդիգէրը վարձեց Փաքր-Ղամարլուի հողերը և սկսեց իր գործարանը, կարծ զիմագրութիւնից յետոյ, զիւղացիք կամաց-կամաց ստիպուած էին յետ քաշուել, կրծտանել իրանց անտեսութիւնը, իսկ յետոյ և բոլորավին թողնել հոգազործութիւնը և հայրենի զիւղը: 80-ական թուականներին Ղամարլուում ապրում էր 24 անկախ ընտանիք 100—120 հոգուց, 88 թուին միացել էր միայն 12 ըն-

տանիք (50 հոդի), որոնցից շատերը չունէին ոչ կով, ոչ ձի, ոչ եղբ։ 1900-ին տեղացիներից մնացել էին միայն 6 ընտանիք, որոնք 2 կովից աւել իրաւունք չունէին պահելու։ Տղամարդիկ Նիդիգէրի հովիւներն էին, իսկ կանայք կթում էին նրա կովերը և ստանում ամիսը 1½—2 ռուբլի։

1884 թուից առաջ 1500 դես. հոդի վրայ ապրում էր 24 ընտանիք 100—120 հոգուց, 20 տարի յետը, գործարան շինելուց յետոյ, նոյն հոդի վրայ ապրում է միայն 40 հոդի, որոնցից 2 ընտանիք շվեյցարացի աղաներ են, իսկ 6 ընտանիք տեղացի նօքարներ... Առաջ մի ջանի վրայ հաշում էր 15 դես. հոդի գործարան շինելուց յետոյ՝ 375 դես.,

Նոյն բանը մենք տեսնում ենք և միւս կապիտալիստական հոդի վրայ դրուած գործարաններում։ Բարօն Փօն Կուչնրախի գործարանի տեղը առաջ գտնուում էին Բողադ-Քիասան և Մամութիլի գիւղերը։ Հաշուելով (հարեան գիւղերի համեմատ) ջանի վրայ 5 դես., մենք կը ստանանք որ զավողի տեղը (2500 դես. վրայ) ապրելիս պէտք է լինէին այսօր մօտ 500 հոդի կամ 80—100 գիւղական ընտանիք։ Իսկ հիմա, այդտեղ ապրում են 1 բարօնի ընտանիքը, 5 գերմանացի ծառայողների և 32 ընտանիք թուրք նօքարներ, ընդամենը 177 հոգի։ Մի անձի վրայ հաշում էր 5 դես. հոդի, իսկ գործարան բացելուց յետոյ—14։

Պարզ է որ կապիտալիստական հոդի վրայ դրուած կաթնատեսութիւնը, իրեն հողագործութիւնից աւելի էքստէնզի (նահապետական) կուլտուրա, չի հաշտում ժողովրդի աճան մտքի հետ։ Նոր-Բայազէթի զաւառում 1894 թուին պետական գիւղացիների միջակ անձի վրայ հաշում էր 190 դես. հոդի որից 997 դ. վարելու ու խոտհարք, իսկ 1 դես. արօտ։ Այդ տարածութեան հոդից գիւղացին ստանում է 365 ռ. Եկամուտ և ապրում։ Ներկայ խոշոր կապիտալիստական պանրագործարաններում մի մեծատաւար պահելու համար հարկաւոր է մօտ 3 դես., որից 1 դնս. խոտհարք վարելահող և 2 դես. արօտ. այդ տարածութեան վրայ մէկ կովի եկամուտը հասնում է 35—40 ռուբլու, այսինքն ամեն մի մեծատաւար պահելու համար գործարաններում աւելի հոդ է բռնուում, քան պէտք է հողագործական լեռնային շրջաններում մի անձաւորութեան համար իսկ միջակ գեսետինը տալիս է համեմատական պայմաններում 192 ռ. Եկամուտ, գործարաններում 117—133 ռուբլի։ Եթէ Նոր-Բայազէթի զաւառի հովերը պետական չը լինէին, այլ մասնաւոր, և կապիտալիստներին յաջողուէր զարգացնել այնտեղ խոշոր պանրագործութիւնը, մի անձնաւորութեան վրայ

այնակաղ հաշուելու էր 14—375 դես. հոդ և 5567 հազ. դես. տարածութիւն ունեցող գաւառում 125 հազ. բնակիչների տեղ կարող էր ապրել միայն 38—16 հազար...»

Բայցի այս, կապիտալիստական պանրագործները զրկելով գիւղացիներին հոդից և ղարձնելով նրանց գործարանի չօբան և կթող, այսինքն գիւղական պրօլետարիներ, ստեղծում են այն տեսակ չարքաշ պայմաններ, որ ժողովուրդը զարգանալու տեղ զնում է դէպի յետ, նոյն իսկ չէ աճում։

Դրան ապացոյց կարող է լինել նա, որ Բօրչալուի գաւառի պանրի գործարանների շրջանում զանազան կարգի գիւղերում նկատում է ժողովրդի աճման շատ տարբեր-տարբեր աստիճաններ։

Այն ժամանակ, երբ հարուստ Ալեքսանդրսկիլի կօլօնիան ա գուխօբորների Բաշքեցիթ գիւղելով վերջի երկը տարին ժողորդի բնական աճումը հաւասար էր 45—55 0/0-ի, հայ Տաշբաշ, վրայ Գօմարէթ, յոյն Ցինցկարօ և թուրք Օրուզման միջակ գիւղերում աճումը 3—20% էր, իսկ աղքատ մասնաւոր սեփականատէրերի հոդի վրայ ապրող հայ Շիթափա և պանրի գործարանների թուրք Ղամարլուի հասարակութեան մէջ ժողովրդի աճումը չէր հասնում մի առկոսի և նոյն իսկ ազգաբնակութիւնը պակասում, ոչնչանում էր...

Ահա ինչո՞ւ, խօսելով կատարելագործուած ձեռվ պանրագործութեան մասին, մենք օգտակար պիտի համարենք միմիայն այն տեսակ ձեռնարկութիւնները, որոնց մէջ մասնակցում են երանք գիւղացիք։ Դա կարելի է անել կամ ընկերութիւններ կազմակերպելով գիւղացիներից կամ բացելով համայնական գործարաններ։

Սյդ տեսակ գործարան կովկասում կայ. դա Ալեքսանդրսկիլի (Ծալկա) գերմանական գիւղի համայնական գործարանն է։ Սկզբում ծալիկեցիք ստանում էին տէրութիւնից վարպետ, շվեյցարական ցուլեր, իսկ հիմա գործը տանում են իրանց պատասխանատութեամբ ընարուած յանձնաժողովի միջոցով։ Գործարանը ունի վարպետ (օգնականների հետ), որը ամեն մէկից ստանում է կաթը (նշանակելով առանձին անտրակների մէջ), պատրաստում պանիր, իւղ և այլ միթերքներ։ Գիւղի կողմից ընարուած վարչութիւնը ծախում է պանիրը, իւղը և ամեն ամսուայ ու տարուայ վերջը տեսնում ընդհանուր և ամեն ընտանիքի հաշիւը։ Սկզբում գործարանը աշխատում էր միայն ամառը, շվեյցարական պանիր պատրաստելու, բայց վերջի տարիները գիւղը օգտակար է համարած գործարանին յանձնել բոլոր տանը չը գործածուող կաթը, որից

գործարանը պատրաստում է իւղ, հում սեր (շմետահա), թան (տօրօցի) և շաբաթը մի անդամ ուղարկում թիվլիս։ Գործարանի հաշիւները ենթակայ են ամենախիստ քննութեան, տանում են շատ մաքուր կերպով։ Աւելորդ չեմ համարում բերել այստեղ մի քանի թուեր այդ զիւղի մասին, որը կարող է տեղացիներիս ծառայել իրեն օրինակ։

Մկանած 1887-ից մինչև 1900-ը համայնական գործարանի տնտեսութիւնը առաջ է զնացած այս չափով։

1887 թ. 1900 թ.

Հնատանիքներ	.	.	.	54	78
Կովեր	.	.	.	?	1,010
Ամառը ստացուած կաթը (թունգի)	50,045		92,738		
Պատրաստուած պանիր պուդ	.	1,036	2,005		
Պանրից ստացուած զրամ ռ.	.	11,385	22,181		
Միթունգի կաթի արժեքն է հան. իւղ.	23,66		25,63		

1896 թուից, ինչպէս վերև յիշուեց, գործարանը բացի պանրից սկսել է մշակել զիւղի ամրող կաթը իւղի, հում սերի և թանի համար, ուստի միջոց կայ հաշուելու և այդ ճիւղերի (ձմեռուայ ամիսների) եկամուտը, որ հաւասար էր.

1896 — 1899

Կաթ (թունգի)	.	.	75,400	74,000
Իւղ (պուդ)	.	.	675	525
Հում սեր »	.	.	354	422
Թան	»	.	1,176	720

Հնդամներ սուբլի 14,031 17,029

Հաշուելով և այս գումարը, պանրից ստացած եկամուտի հետ, մինք կը ստանանք որ Ալեքսանդրոսկիլֆում միջակ կովը տալիս է 927 (պանրի շրջանում) և 75 (ձմեռուայ շրջ.), իսկ ընդամներ 168 թունգի (42 պուդ) կաթ։

Այդ քանակութեան կաթից պատրաստում է 202 պ. շվեյցարական պանիր, 06 պ. կարաք իւղ, 06 պ. հում սեր և 10 պ. թան։

Այս ամենը գնահատում է ամառուայ շրջանում 222 ռ., ձմեռուայ 170 ռ., իսկ ամրող տարուայ 392 ռ.։ Զը հաշուած կովերի տուած հորթը, կաթնատնտեսութիւնից ստացուած եկամուտը մի անձի վրայ հաւասար է 784 սուբլու, իսկ միջակ ընտանիքի 5030 ռ.։

Դերմանացիք Ալեքսանդրեսկիլֆում տարէց տարի հարբաւանում են Նրանք լայնացնում են ոչ միայն անասնապահու-

թիւնը այլ և հողագործութիւնը. ունեն մօտ 10 դես. այզի (խնձոր, տամբուլ), նոյնքան բօստաններ, ուր բացի կարտոֆիլից մշակում են և տակեր՝ ձմեռը կովերին կերակրելու համար։ Բացի պետական հողերից (2126 դես.), համայնքը կապալով վերցնում է հողեր և հարեաններից (մօտ 2500 դես.), պահում է 15-ից աւել ցուլեր ազնիւ կաթնատու ցեղերից։ Բացի հնձի մշակներից, կօրնիստները ունեն 15 տարեկան նօքարներ (թուրք, վրացի, հայ) և 8 հողի չօրան համայնքի հօտերի արածացնելու համար...

Գիւղացիների ապրուստը, տան կահկարասիքը, յիշեցնում են քաղաքացի ապահով արհեստաւորներին և վաճառականներին։ Բնական աճումը 1898—1900 թուերին համում էր 45—70/0-ի, գիւղը ունի երկսեռ զարոց, երգեցիկ խումբ, որը առն օրերը հանդէսներ է ունենում։

Ահա ինչ հետեւանքների է հասցնում կատարելագործուած անտեսութիւնը, կազմակերպուած ժամանակի պահանջի ու ուգու համեմատ։

Եթէ մեր լուսային գիւղերում զարդանայ կատարելագործուած պանրտպործութիւնը ու իւղ պատրաստելը, մեր ժողովրդի կաթնեղներից ստացած եկամուտը, 564 ռ. ջանի վրայ (4512 ռ., ընտանիքի) կը բարձրանայ մինչև 1122 » »

» (904 » » ) և աւելին։ Դա դժուար չէ անել, որովհետեւ գիւղացիք ունեն պատրաստի կաթը, պատրաստի գումեր և կեր անաստների համար, ունեն հմտութիւն և սէր դէպի անասնապահութիւնը ու կաթնատնտեսութիւնը։ Մնում է նրանց գիւղակցութիւն, ազնիւ զեկավարներ, նոյն իսկ մի դեկավար և մօտ 2000 ռ.՝ գործիքների և կաթնատուն շինելու համար։

Մեր գիւղացիք, հարկաւ, գերմանացիներ չեն, բայց... նրանք շատ լաւ հասկանում են ըմբռնում են իրանց շահը և զեկավարների հետ ձեռք ձեռքի տուած հեշտութեամբ կարող են իրադորել այն, ինչ որ մնում են առաջադէմ ազգերը։ Տարբերութիւնը կը լինի միայն աստիճանի մէջ։ Եթէ կուլտուրապէս բարձր, կրթուած, լաւ հասարակական կարգեր ունեցող ազգերը անում են տարին 4—5 քայլ դէպի առաջ, մինք կ'անենք 3, 2 քայլ։ Մեղ համար սա էլ յաջողութիւն է։ Յարուցուած հարցերի տեսակէտից առաջադէմ ազգերից կաթնատնտեսական, ինչպէս և այլ արդիւնաբերական ընկերութիւնների կազմակերպելը կարեոր և անհրաժեշտ է և մի այլ տեսակէտից։ Ինչպէս յայտնի է ընդհանրապէս և ինչպէս տեսնում ենք մինք

մեր նեղ շրջանում, վերջերս արագ կերպով զարգանում է հա-  
ղորդակցութիւնը և սրա հետ միասին վաճառականութիւնը:

Եթէ 100 տարի առաջ կովկասցի դիւզացին իր սպառած  
մթերքներից 10%—էր ստանում դրսից, իսկ 99% պատրաստում  
տանը, 50 տարի առաջ դրսից առնուղղ մթերքները կազմում  
էին նրա սպառելիքի 10%, իսկ հիմա կազմում են 20, 30, 40%:  
Շատ հաւանական պիտի համարել որ 20, 50, 100 տարուց յետ  
մեր դիւզացու դրսից առնուղղ մթերքների տոկոսը կը բար-  
ձրանայ մինչև 50, 70, 90%....

Աշխատանքի բաժանումը առաջ է գնում այնպիսի արագ  
քայլերով, որ հետու չէ այն ժամանակը, երբ ամեն աշխատով  
կը զբաղուի միայն մի նեղ ճիւղով, ծախելով իր արտադրած  
մթերքների 50, 80, 90%—ը ուրիշներին և ստացած գումարով  
դրսից առնելով իրան անհրաժեշտ պիտոյքների 50, 80, 90%—ը:

Ահա ինչու միջնորդ, վաճառական դասակարգի գերը տա-  
րեց տարի մեծանում է և այդ դասակարգը օգտուելով և ար-  
տադրողից և սպառողից դիղում է չը տեսնուած հարստու-  
թիւն...

Ինքն ըստ ինքեան պարզ է, որ և արդիւնաբերողի և սպա-  
ռողի շահերը պահանջում են հաստատել միմնանց մէջ անմի-  
ջական կապ, դուրս վոնդել մէջ տեղից վաճառական դասակար-  
գը և վերջինիս ստացած եկամուտը բաժանել միմնանց մէջ:

Այս հարցը կազմում է ներկայ տնտեսական պայմանների  
լուծելիք պիօրեմներից մէկը և զրա համար աշխատում են շատ  
և շատ ոյժեր:

Բայց ով չը գիտէ, որ վաճառականական կապեր հաստա-  
տատելու համար հարկաւոր է խոշոր գործ, հարկաւոր են հմուտ  
և բանիմաց մարդիկ, հարկաւոր է կատարելագործուած տնտե-  
սութիւն: Ներկայումս մեր արդիւնաբերութիւնները, մանաւանդ  
դիւզացիների, այնքան փոքր են, որ նրանք անկարող են սե-  
փական առնետուր սկսել. այդ ձեռնարկութիւնների ելեմուտքը  
ունի այնքան ծաւալ, որ նրանք չեն կարող զիմանալ ոչ մի  
շօշափելի ծախսերի, այս կամ այն կատարելագործութիւնը մըտ-  
ցնելու համար, մասնաւորապէս կաթնատեսութեան և անաս-  
նապահութեան վերաբերմամբ պէտք է համարել պարզ որ 5—  
10 կով ունեցող դիւզացին չի կարող 50—100 ո., արժէք ու-  
նեցող սեպարատոր, խնոցի և այլ կատարելագործուած գործիք-  
ներ առնել կարագ պատրաստելու համար: Դա ձեռնտու է ա-  
ռնելի 20—30 կով ունեցողին. իսկ 20—30 կով ունեցողը, որ կա-  
րող է պարապել կարագ պատրաստելով, չի կարող զբաղուել  
շվեյցարական պանիրի պատրաստութեամբ, որովհետև վերջինիս

համար պահանջում է ամենաքիչը 30—40 պուդ կաթը, որ  
կարելի է ստանալ միայն 100—150 կրպից. շվեյցարական պանիր  
պատրաստելու համար ամենաժեշտ է 600—1000 ո. ստացող  
վարպետ, յատուկ շինութիւններ և այլն: Մի քանի հարիւր կով  
ունեցողը (ընկերութիւն, համայնք կամ մասնաւոր մարդ) կարող  
է պատրաստել և իւղ, և պանիր շվեյցարական ձևով, բայց ան-  
կարող է մենակ զբաղուել մսի առևտուրով, որովհետև վերջինս  
յաւ զնելու համար հարկաւոր են հարիւրաւոր տաւարներ: 100  
մասցու կամ 1000 ոչխար անեցողը կարող է սկսել սեփական  
մսի առետուր որեէ գաւառական քաղաքում, բայց ոչ թիֆլի-  
սում: Վերջինիս համար պահանջում է օրական մորթել 5—10  
մեծատաւար, 20—30 ոչխար, մի քանի խոզ և այլն: Բայց սա  
էլ բաւական չէ: հազարաւոր գլուխ ապրանք ունեցող թիֆլիսի  
չօդարները կարող են սեփական առետուր ունենալ թիֆլիսում,  
բայց նրանք չեն կարող մտնել վաճառականական յարաբերու-  
թիւնների մէջ եւրոպացի (Մարսէլի, Լոնդոնի, Համբուրգի)  
հետ: Լօնդոնի հետ կապեր հաստատելու համար չի կարելի  
նաւով 50, 100 ոչխար ուղարկել. նաևերի սամանուցները պա-  
հանջում են միս հարիւրաւոր, հազարաւոր, տամնեակ հազարա-  
ւոր պուդերով: Սրտասահմանի հետ առետուրը կարող է յաջող  
գնալ միայն այն ժամանակ, երբ նա կատարում է ոչ թէ մէկ,  
երկու, տասը անգամ, այլ պարբերաբար, արբինների ընթաց-  
քում:

Քանի խոշոր է ձեռնարկութիւնը, այնքան նա աւելի է  
տանում կատարելագործութիւնների համար ամենաժեշտ ծախ-  
սեր, նոյնքան պակաս է լինում ընդհանուր ծախսերը, այնքան  
աւելի հետ և ձեռնտու է այդ ձեռնարկութեան առետուրը  
զնել շահաւետ հողի վրայ: Այդպէս է միջազգացին շուկայի և  
ներկայ տնտեսական պայմանների պահանջը:

Դրան հպատակուել ենք և մենք... Դժբախտաբար մենք  
չենք կարողանում գեռ և օգտուել վերջերս առաջ եկած լայն  
միջազգացին յարաբերութիւնների դիւրութիւնից: Մենք ար-  
տադրում ենք միջազգացին շուկան նաւթ, մետաքս, հում կաչի  
—այն մթերքները, որ արտադրում էին և մեր պապերը: Բայց  
մեր ահազին արժէք ունեցող փայտելէնը, մեր հիանալի համ  
ունեցող ոչխարը, խոզը, մեր չնչին զին ունեցող միսը—մնում  
են միմիայն մեր քաղաքացինների համար և ծախտում չնչին  
գնով:

Օդեսայից (կամ Բաթումից) մեծ քանակութեամբ գարի,  
ցորեն և սիմինդր ուղարկելիս Մարսէլ, Համբուրգ, Լոնդոն,

պուդը նստում է 9—11 կողէկ \*). Նոյն չնչին գնով կարելի էր արտասահման փոխադրել և մեր միսը, իւզը, կաթնեղէնները: Այն ժամանակ այդ բոլոր մթերքների գները մեր երկուում կը կրկնապատկուէր և կ'եռապատկուէր: Դրա համար հարկաւոր է միայն պատրաստել ապրանք միջադր. շուկայի պահանջի համեմատ, ստեղծել խոշոր վաճառականութիւն արտասահմանի հետ, մանաւանդ կազմակերպուած ընկերական հողի վրայ: Հարկաւ, միանգամից այս ամենը չի լինի, բայց թող զարգանան մեղ մօտ մանր ընկերակցութիւնները ու համայնական ձեռնարկութիւնները և մենք կը տեսնենք ինչպէս մօտ ապագայում մեր մթերքները կոնդոնում և այլ տեղեր մրցում են դանիայի, Կանադայի, Աւստրալիայի և այլ առաջադէմ երկրների մթերքների հետ:

✓ Ընկերութիւնները միջոց կը տան դնել գործերը խոշոր հողի վրայ և մայնել տեխնիկական կատարելագործութիւններ, օդտուել մասնագէտների հմտութիւնից, ընկերութիւնները կազատեն մեր ժողովուրդը միջնորդների ճանկերից, միջոց կը տան մեղ բանալ նոր, անսահման շուկաներ, որով դդարի չափով կը բարձրացուի մեր ազգատ ժողովրդի բարեկեցութիւնը:

Թող օտար երկրների փորձը լինի մեղ օրինակ: Մի քանի տարի առաջ Ռուսաստանի հիւսիսային նահանգները պանիր ու իւղ էին պատրաստում միայն ներքին շուկայի համար, այսինքն Ռուսաստանի քաղաքների: Բայց ահա երեան եկան շվեդացի և ֆինլանդացի կաթնատնտեսներ, որոնք սկսեցին պատրաստել կարագ իւղ ացնակէս, ինչպէս պահանջում է Անգլիայի շուկան և այդ ճիւղը տարէց տարի ստանում է աւելի և աւելի մեծ ծաւալ: Սիրիրիայի երկաթուղին անցկացնելուց յետյ պետութիւնը նշանակեց այդ շրջանի համար յատուկ իւղ պատրաստող վարպետներ, երկաթուղու մէջ մոցրեց յատուկ վագօններ և գործը արագ քայլերով սկսեց առաջ գնալ:

Պ. Աւելա. Քալանթարի տաելով 1900 թուին Սիրիրիայից Անգլիա է արտահանուած 12 միլ. ոուրլու կարագ իւղ, 1901-ին մօտ 20 միլ. ոուրլու իւղ, իսկ եկող 1902 թուի համար սպասում է որ արտահանուելիք իւղի արժեքը կը հասնի մինչ 30 միլ. ո.:

Անցած ամառ շատ անգամ պատահել է, որ երկաթուղին ստիպուած է եղել կազմակերպել յատուկ գնացքներ (5—7 վա-

\*) Касперовъ, Хлѣбная Торговля.

գօնից) միմիայն կարագ փոխադրելու համար: Ասում են, եր կաթուղու վարչութիւնը նորից պատուիրել է կառուցել 200 վաղօն կարագի փոխադրութեան համար:

Սիրիրիայի ահագին տարածութիւնը մի կողմից, իւղագործութեան տեխնիկայի զարգացումը միւս և, որ ամենազգը խաւորն է, ապահով Անգլիայի շուկան երրորդ կողմից գրաւական են, որ Սիրիրիայի արտահանութեան համար իւղը կը խաղայ առաջնակարգ տեղ:

Դրա հետեամբները հիմա էլ արդէն նկատում են: առաջ կաթի պուղը Սիրիրիայում ծախուում էր 20—30 կոպէկով, իսկ հիմա արժէ 40—50 կոպ.: Ասել է, ժողովրդի և կամուտը կաթ նատնտեսութիւնից վերջի միքանի տարուայ ընթացքում Սիրիրիայում կրկնապատկուել է...

Մեծ քայլեր, ինչպէս առհասարակ, նոյնպէս և կաթնատրն տեսական և անսահմապահական ճիւղերում, արել են վերջերս Ամերիկայի Սիրացեալ-Նահանգները:

«Բամբակի մշակութիւնը Սիրացեալ-Նահանգների հարաւային մասում—ասում է նորերս Ամերիկայից վերադարձած զիւղանտես Տարատընովը իր նախնական զեկուցման մէջ \*)— վերջի 15 տարուայ ընթացքում ոչ միայն բռնել է աւելի մեծ տարածութիւն և աւելացրել բերքը, այլ և ստացել առաջուանից շատ աւելի կարեոր նշանակութիւն: Սրա պատճառը նա է, որ բայց մաքուր բամբակից, այս մշակութեան մէջ շատ կարեոր տեղ են սկսել բռնել սերմը, որից ստացւում է գեղեցիկ ձէթ, կոսպոռնը և նրանից ստացած ալիւրը իրեկ լաւագոյն և արժան գեր» անսառունների համար և վերջապէս բամբակի սերմի կեզեր—իրեր խոտին փոխարինող լաւ սուրբօպատ:

Վերջերս ընդունուած ճշմարտութիւն է համարում, որ բամբակ արտադրող նահանգները Ամերիկայում հանդիսանում են միաժամանակ և անսահմապահութեան նահանգներ, այս ինչ առաջ «կերի պակասութեան պատճառով» այս նահանգներում անսահմապահութեամբ համարեա չէին պարապում: Բամբակի մշակութեան զարգանալու հետ միասին առաջ եկաւ յաւ և արժան «կերի» մեծ քանակութիւն, որի պատճառով հարաւում արագ կերպով զարգացաւ անսահմապահութիւնը և կաթնատնտեսութիւնը: Բամբակից ձէթ հանող գործարաններից շատերում սպահուում են մասցու և կաթնատու ասրանքից ահապին հոտերը Մի փունտ կոպատնի ալիւրին խառնում են առհասարակ 4—5 գ. սերմի կեղե, անսառունները սնուելով այս կերպով, արագ

\*) Торгово-Промышленная Газета,

կերպով մաի են դալիս և չաղանում... Անասունների համար լաւ կեր ամերիկացիք ստանում են և սիմինդրի (եզիպացգրենի) բնից, որը յատուկ մեքենաներով մանրացնում են. Հարաւալին նահանգներում ամեն տեղ դարձանում է խոտացանքով և անամապահութիւնը:

Ինչպէս պետական ու մասնաւոր փորձնական ագարակները, նոյնպէս և օրինակելի մասնաւոր ագարակները զբաղուած են այն կարևոր հարցով, թէ ինչպէս վերականգնել հողերի առաջուայ ոյժը, որ սպառուած է չնորհիւ միատեսակ բոյսերի անընդհատ մշակութեան: Սրա համար դիմում են թիթենակերպ խոտերի ցանքսի («հարաւի երեքնուկ» և այլն) խորը և մաքուր վարի ու մշակութեան, պարարտացման ամենալայն ծաւալով...

Բոլոր փորձնական կայարաններում և լաւ ագարակներում ներկայում ամենալուրջ ուշադրութիւն է դարձրուած բամբակի, սիմինդրի, հացահատիկների նոր տեսակներ առաջ բերելու վրայ: Սա անուում է և լաւ, տեղական պայմաններին համապատասխան սերմեր ջոկելով և մի քանի տեսակների փոշիները խառնելով արհեստական միջոցովվ...

Ահա ինչու Միացեալ-Նահանգները կաթնեղէններ  
արտահանում և ներմուծում էին \*)

1889—93	209	միլ. ռ.	27	միլ. ռ.
1894—98	160	»	31	»

Այն ինչ Միացեալ-Նահանգներից համարեա երկու անգամ աւելի մեծ Ռուսաստանը արտահանում և ներմուծում էր կաթնեղէններ՝

	արտահանում	ներմուծ.
1883—87	32	միլ. ռ.
88—95	48	»
93—97	41	»

Նոյն ահազին տարբերութիւնը մենք տեսնում ենք մաի ու այլ անաօնապահութեան մթերքների վերաբերմամբ:

1896 թուին Ռուսաստանից արտահանուած էր արտասահման \*\*). 98 միլ. ոուրլու կենդանի անսառններ, 135 միլ. ռ. թարմ և աղած ու չորացրած միս, 34 միլ. ռ. պանիր և իւղ, ընդամենը 267 միլ. ոուրլու, կամ 22 կոպէիր կայսրութեան միջակ անձնաւորութեան վրայ:

\*) Радицъ, Скотоводство и Молочное хозяйство въ разныхъ государствахъ.

\*\*) Энциклопед. словарь Эфроня, „Россия“.

1891—92 թուականներին Ամերիկայի Միացեալ-Նահանգների արտահանութիւնը անասնապահութեան և կաթնատնտեսութեան մթերքներով հաշուում էր \*).

Մեծատաւար	640	միլ. ռ.
Միս տաւարի	650	»
» խոզի	102	»
Սուջուզ (մաի)	173	»
Ճարպ . . .	785	»
իւղ և մարզարին	51	»
Պանիր . . .	156	»

Ինդատենը 2557 միլ. ոուրլու, կամ մի անձնաւորութեան վրայ միջին թուով 406 ոուրլի: Կարծեմ աւելորդ է յիշել այստեղ, որ այդ ահազին տարբերութեան ամենագլխաւոր պատճառը Միացեալ-Նահանգների և Ռուսաստանի կուլտուրական, անսահսական և հասարակական պայմանների տարբերութեան մէջն է...

Եւ ճիշտ, այդ երկու երկրներում, 90-ական թուականներին հաշուում էր \*\*).

Թուաստան.	Ամերիկայի Միաց-Նահ.
Ազգաբնակութեան թիւ, հազարներով	116,100 62,982
Ամեն 10,000 հոգուց դպրոց յաճախող	237 1,293
» 1,000 » անգրագէտներ	708 0
Պարբերական հրատարակութ. ընդամ.	705 16,319
Հում երկաթ, ընդամ. ցիստներ	746 8,413
Քարածուխ » » .	6,208 143,137
Բամբակեղէն մանելու համար իլիկներ	
հազար . . . .	3,828 13,400
Երկաթուղի (քիլոմ.) ամեն 10,000 ք.	
քիլոմ. տարած. . . .	58 302
Բոլոր ապրանքների ներմուծում միլ. ռ.	
(1890) . . . .	674 1,729
Բոլոր ապրանքների արտահանութիւն	
միլ. ռ. (1891) . . . .	1,142 1,777
Պետութեան եկմուտաք միլ. ռ.	1,436 909
» ծախսը » » »	1,564 859
» պարտքը » » »	6,703 3,246

\*) Prof Juraschek. Geographisch statistische Tabellen 1992 j.

\*\*) Ibid,

Թուերը շատ պերճախօս են:

Ներմուծման և արտահանութեան վերաբերեալ թուերը պարզելու համարը անհրաժեշտ է միայն յիշեցնել, որ ինչպէս և աղքատ անհատներ, իր պարագերի համար Ռուսաստանը տալիս է ուրիշներին մօտ 500 միլիոնի մթնքներ աւելի քան ստանում է: Նոյն կուլտուրական տարբերութիւնը ունի աճազին նշանակութիւն և նրա վերաբերմամբ, որ առաջադէմ և կուլտուրապէս աւելի բարձր Ամերիկան ու միւս երկրները աւելի արագ են կատարում իրանց տնտեսական զարգացումը, քան դա նկատում է աւելի յետ մնացած Ռուսաստանում և կովկասում:

Մեր շօշափած հարցերի նկատմամբ առանձին ուշադրութեան արժանիք է Դանիան: Վերջին 25 տարուայ ընթացքում վերջինիս զիւղատնտեսութիւնը կրած է անհաւատալի փոփոխութիւն (\*): Դեռ մօտ անցեալում Դանիան ապրում էր հացով և հողագործութիւնը այդ երկուում խաղում էր իշխող դեր: Վերջի տարիների զիւղատնտեսական կրիզիսը (հացի գնի իջնելը) ստիպեց գանիացոց մտածել զիւղատնտեսական փոփոխութիւնների մասին: Օգտակար համարուեց հացահատիկների աեղոյժ տալ խոտի ցանքսին և անասնապահութեան: Այդ համոզունքի հետևանքը եղաւ նա, որ 1876 թուից սկսած հացահատիկների բռնած տարածութիւնը պակասած է Դանիա երկու անգամ և սրա համեմատ լայնացած սիրիս-սիրիի, եօնջի, տակերի բռնած տարածութիւնը, որմնք այսօր բռնում են երկրի  $\frac{1}{3}$  մասը: Մրա հետ միասին 35 տարուայ ընթացքում 56% -ով աւելացաւ տաւարի թիւը: Ոչ մի երկիր Եւրոպայում անասնապահութեան վերաբերմամբ չի տուել այսչափ արագ զարգացում:

Անասնապահութեան զարգացումը արհեստական պարագայնող նիւթերի հետ միասին ունեցաւ այն հետևանքը, որ 25 տարուայ ընթացքում հացահատիկների բերքը Դանիա բարձրացաւ՝ ցորենի  $25\%$ , խրբուկի  $17\%$ , կարտոֆիլի  $59\%$ , խոտերի  $18\%$ :

Աւելի զարմանալի են այն միջոցները, որոնցով Դանիան հասաւ այդ հետևանքի: Կուլտուրական բարձրութեան հետ միասին այդ երկրը ներկայացնում էր մանր հողատիրութեան վայր: Ժողովրդի  $\frac{2}{3}$  մասը ունի 10 դես. պակաս հող:

\*) Պրօֆ. Զուպրօֆ. ԱՅՏ զարգացուցակ, „Русскія Вѣдомости“, 1901, № 172.

Գիւղական ազգաբնակութեան  $400/0$  պահում է 1—3 կով,

29 » » 3—9 »

27 » » 10—59 »

4 » » 30 և աւել.

Մի քանի անձնուէր շրջող զիւղատնտեսներ մտածելով ինչ միջացներով օգնել զիւղացիներին, եկան այն եղրակացաւթեան որ կաթնատնտեսութեան համար անհրաժեշտ մեքենաները, ինչպէս և այդ մթերքների առևտուրը յաջողակ կարելի է տանել միայն այն ժամանակ, եթէ զիւղացիք համախմբուեն ընկերութիւնների:

Գիւղատնտես Ֆիօրդի և ընկերների քարոզը զուր չանցաւ: Առաջին ընկերական կաթի գործարանը բացեց 1882 թուին անասնապահ Անդերսոնը: Գործարանի գործերը գնացին յաջող և շուտով Անդերսոնը ունեցաւ հետևողները: 1899 թուին Դանիան հաշւում էր 1013 ընկերական և 260 համայնական կաթնատներ (գործարաններ): Ամեն մի գործարանի վրայ միջին թուով հաշւում էր 800 կով: Գործարանները ունեն ամեն տեսակ յարմարութիւններ՝ սեպարատորներ, պաստերիզացիի (չը փշանալու համար) ենթարկող մեքենաներ և այլն: Այդ պատճառով կաթնատները նստել են բաւականին թանգ (4000—20,000 ռ.):

Որովհետև այդ ծախսերի մեծ մասը կատարուած է պարագ վերցրուած դրամով ( $4—50/0$ -ով), ամեն կովի վրայ այսօր պարագ է հաշւում 17 ռուբլի:

1898 թուին գործարանների անդամ էր հաշւում 148,000 ծխատէր 842,000 կովերով: Մի կովը միջին թուով տարին տալիս էր 135 պուդ կաթը, որի ամեն մի 266 պուդից ստացւում էր մի պուդ իւզ: Ընդամենը գործարանները ստանում էին 46 միլ. պ. իւզ: Այդ իւզի ամենամեծ մասը փոխադրում է Անգլիա: Որպէս զի այդ փոխադրութիւնը ստանայ աւելի լայն ծաւալ, դանիացիք էլի դիմոցին ընկերութիւնների: 1887 թուին կազմուեց առաջի ընկերութիւնը իւզի արտահանութեան համար, որին մասնակցեցին 84 կաթի ընկերական գործարաններ, 1899-ին այդ ընկերութեան տարեկան եկմանուքը հասնում էր 14 միլ. ռուբլու:

1895-ին կազմուեց երկրորդ խոշոր ընկերութիւնը իւզի արտահանութեան համար, իսկ յետոյ տրիչ աւելի մենքերը:

Ակսուած գործը զարգացաւ աւելի և աւելի: 1887-ին Դանիա կազմեց առաջի ընկերութիւնը միս արտահանելու համար, միւս տարին կազմուեցին 7 նոյնանման ընկերութիւններ:

Ներկայումս մսի արտահանութեան ընկերութիւնների թիւը համում է 25-ի 56,000 անդամներով, որոնք 1899-ին արտահանութեան համար մորթած են 780,000 խող, 22,500 մեծատար, 17,000,000 ռ. արժողութեամբ:

Ընկերութիւններին անհրաժեշտ կապիտալը վերցրուած է տօկոսով և ապահովուած անասունների թուի համեմատ: Բոլոր ընկերական սպանդանոցները կապուած են Կոպէնհագէնի կենտրոնական միութեան միջոցաւ, որը մշտական յարաբերութեան մէջ է արտասահմանի հետ և հաղորդում է անդամներին տեղեկութիւններ պահանջի և գների մասին:

Ընկերական սկզբունքը մտած է Դանիա և... ձուի առետուրի մէջ: 1895 թուին երկու գիւղական ուսուցիչներ (Եօրգինսօն և Մելլեր) սկսեցին դիւղացիների մէջ քարոզել որ արտահանուող ձուերի ժողովելը և ծախելը հարկաւոր է գնել աւելի ազնի: և կանոնաւոր հողի վրայ և կազմեցին առաջի ընկերական միութիւնը Մելլերի նախադանութեամբ: Ընկերութիւնը բացեց ճիւղեր գիւղերում, որոնց անդամները պարտաւորուեցին տալ միայն նոր ածած ձուեր: Չուերը ժողովում են շարաթը մի անդամ և հսկողութեան համար ձուի վրայ նշանակում է անդամի և ճիւղի համարը: Սմեն մի հին ձուի համար նշանակուած է տուգանք  $2^{1/2}$  ուուրլ չափով: Անգլիայում Դանիայի թարմ ձուերը գնահատւում են ամենաբարձր զողի: Ընկերութիւնը սկսեց իր զործը 6 ճիւղերով 2000 հոգու անդամակցութեամբ, իսկ հիմա, հինգ տարուց յետոյ, ունի 365 տեղական ճիւղ 22,000 անդամներով...

Բացի վերը բերած արաւանող ընկերութիւններից, Դանիայում արագ կերպով զարգանում են և սպասող ընկերութիւնները, որոնց թիւը այսօր համում է 837-ի 130,000 անդամներով կոպէնհագէնի կենտրոնական սպասող ընկերութիւնը միացնում է 580 տեղական ընկերութիւններ և նրա կատարած ելեմուաքը 1899-ին համում էր 4,400,000 ռ.:

Եթէ զումարել բոլոր ընկերութիւնների անդամների թիւը, մենք կը ստանանք 870,000, որ նշանակում է թէ Դանիայի ազգաբնակութեան մեծամամութիւնը մասնակից է սպասող և արտադրող խոշոր ընկերական միութիւնների տուած օգուտներին:

Ինչ մեծ ազդեցութիւն ունի ընկերութիւնների զարգանալը և նրանց տուած օգուտը Դանիայի անտեսական դրութեան վրայ—մենք ծշտօրէն չը գիտենք: Յամենայն դէպս պարզ է, որ ինայսլական զրամարկիցներին մասնակցողների թիւը, ինչպէս և մասնակցութեան գումարը որոշ չափ պարզում է

զանազան երկրների բարեկեցութեան չափը: Եթէ դա այդպէս է, անկասկած պիտի համարել, որ Դանիան այդ կողմից բըռնում է առաջնակարգ տեղ: Պարիզից ցուցահանդէսում այդ կողմից համեմատութիւն էր զրուած կուլտուրական ազգերի մէջ: Այդ համեմատութիւնից երեսում էր, որ ամեն մի 100 հոգուց ինայց պական ընկերութիւնների մէջ մասնակցում էին: Դանիա 46, Գերմանիա 26, Ֆրանսիա 25, Եւրոպ. Ռուսաստան 3 հոգի: Խնայուած դրամի չափը ամեն մի անձնաւորութեան վրայ համում էր՝ Դանիա 135 ռ., Գերմանիա 69 ռ., Ֆրանսիա 41 ռ., Եւրոպ. Ռուսաստան 7 ռ.:

«Եթէ յենուել այս թուերի վրայ, —վերջացնում է իր խօսքը պրօֆ. Չուպրովը,— գուրս է գալիս որ ոչ թէ միայն մեր հայրենիքը, այլ և անտեսական զարգացման ճակատին կանգնած երկիրները նախանձելու և օրինակ են վերցնելու փոքրիկ Դանիայից և նրա համեստ հողագործներից...»



300



21.168